

ԲԱՆԱԶԵՎԵՐ

ՀԱՄԱԿ (Բ) ԿԿ-Ի ՑԵՎ ԿՎՅ-Ի

ՄԻԱՑՅԱԼ ՊԼԵՆՈՒՄԻ

6/IV — 11/IV 1928

ՀԱՅԿ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ի Ե Վ Ա Ն — 1928

3001-11

2

1944.


380.17



ԲԱՆԱԶԵՎԵՐ

ՀԱՄԱԿ (Բ) ԿԿ-Ի ՅԵՎ ԿՎՀ-Ի
ՄԻԱՑՅԱԼ ՊԼԵՆՈՒՄԻ


18370 A 3695



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ - 1928

Գրառեպլար № 799 ր. հ. 783. Տիրաժ 2000

Պետերատի 2-րդ տպարան Յերեվանում—736



ՀԱՄԱԿ (Բ) ՅԵՎ ԿՎՀ-Ի ՄԻԱՑՅԱԼ ՊԼԵՆՈՒՄԸ

Սույն թվի ապրիլի 6—11 տեղի ունեցավ Համ. ԿԿ(Բ) կենտրոնական Կոմիտեի ու կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի պլենումը՝ մասնակցությամբ կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի անդամներին:

Պլենումը քննության առավ հետևյալ հարցերը.

- 1) Ընթացիկ տարվա հացամթերումները յեվ յեկող տարվա հացամթերման կամպանիայի կազմակերպումը.
- 2) Քաղբյուրոյի հանձնաժողովի գեկուցումը Շախոսիի գործի հետեվանով յերեվան հանած քերությունները վերացնելու համար ձեռք առած գործնական միջոցների մասին.
- 3) Քաղբյուրոյի ու Կենտկոմի պլենումի աշխատանքների ծաղիւրը, և տեղերը կենտրոնական աշխատակիցները գործուղելու մասին հետևյալ վորոշումը կայացրեց.

«Տեղի աշխատանքների թերությունների դեմ մղվող պայքարն ուժեղացնելու, ինչպես և կենտրոնական մարմինների ղեկավարման պրակտիկան բարելավելու նպատակով ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլենումը վորոշում և, վոր ԿԿ ի անդամները, ԿՎՀ-ի նախագահության անդամները, ժողկոմներն ու սրանց տեղակալները Համարմիթորհի ու Միությունների ԿԿ-ի նախագահության անդամները տարեկան վոչ պակաս քան $1\frac{1}{3}$ —2 ամիս, տեղերում աշխատեն»:

Բացի այդ, պլենումն ընկեր Անդրեյեին Հյուսի-

սային կովկաս փոխադրելու պատճառով՝ ազատեց
կազմբյուրոյի անդամի պարտականություններից ու
փոխարենը կազմբյուրոյի մեջ մտցրեց և կենտրոնական
կոմիտեի քարտուղարութեան անդամի թեկնածու կար-
գեց Բաղմանին: Կազմբյուրոյի անդամների թեկ-
նածուների կազմի մեջ և մտցված ընկեր Անտիպովը:

ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ՀԱՅԱՍՏԵՐՄԱՆ ՈՒ 1828/29 ՔՎԻ ՀԱՅԱՍՏԵՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

(Քանաձեկ ընկ Միկոյանի զեկուցման առթիվ՝ միա-
ձայն ընդունված ԿԿ-ի յեվ ԿՎԷ-ի միացյալ պլե-
նումի կողմից 1928 թ. ապրիլի 11-ին)

Յերկրի արտադրական ուժերի արագ վե-
րելքի ֆոնի վրա ընդհանրապես, պետական՝ արդյու-
նաբերութեան զարգացման արագ վերելքի ֆոնի վրա
մասնավորապես և ընդհանուր առմամբ յերրորդ հա-
ջող բերքից հետո՝ ընթացիկ տնտեսական տարվա հա-
ցաթիւքի ման կամպանիան մի շարք խոչընդոտների
հանդիպեց, զոր մի ժամանակ սպառնում էին համա-
ժողովրդական տնտեսութեան ճգնաժամի փոխվել (հա-
ցաթիւքի ման, հումքի միւթիւքի ման և արտադրութեանը
հումք մատակարարելու դործի ընդհատման, քաղաք-
ների պարենավորման դործի ընդհատման վտանգ,
արտածման ու ներմուծման ծրագիրը խախտելու վե-
տանգ և այլն):

Այս դժվարութեանների արմատը շուկայի հավա-
սարակչութեան խախտումն էր, ըստ վերում շուկայի

հարաբերությունների դիսպրոպորցիայի սրումը (մի կողմից՝ գլուղի վճարունակ պահանջ, մյուս կողմից՝ արդյունաբերական ապրանքների առաջարկ) բացատրվում է գլուղի յեկամուտի բարձրացումով, մանավանդ գլուղի ունեոր ու կուլակային խավերի յեկամուտի բարձրացումով:

Գլուղի վճարունակ պահանջի բարձրացումը, արդյունաբերական ապրանքների առաջարկի համեմատությամբ, մի շարք տարբեր նշանակություն ունեցող պատճառներով է բացատրվում, այն է՝ արդյունաբերական ապրանքների գների իջեցումով ու միաժամանակ տեխնիկական մշակույթների և անասնաբուծության մթերքների գների բարձրացումով. գլուղատնտեսության ներսում այդ ճյուղերի տեսակարար կշռի բարձրացումով ընդհանրապես. դրսի աշխատանքներից ստացվող գումարի զգալի աճումով,—մի բան, վոր առաջին հերթին շինարարության ծավալման հետ կապ ունի: Գլուղի գնողական ֆոնդերի այդ աճումը հաշվեկշռված չէր, վոչ ապրանքի առաջարկի համապատասխան աճումով, (վոր, գլուղահաշիվ արած, աճել է իր ամբողջությամբ, սակայն, գների իջեցման պատճառով, իր արժեքայնությամբ չի աճել), վոչ գլուղի ունեոր խավերի հարկման համապատասխան բարձրացումով, վոչ ել վոչ-հողագործական բնույթ ունեցող յեկամուտների հարկումով: Մյուս կողմից՝ հացահատիկների գների ու տեխնիկական մշակույթների ու անասնաբուծական մթերքների գների խիստ անհամապատասխանություն տեղի ունեոր, ըստ վորում հարկման տեսակետից հացահատիկների արտադրությունը գլուղատնտեսության այլ ճյուղերի համե-

մատուցյամբ ավելի քիչ ձեռնտու պայմանների մեջ
 եր դրված: Այս բոլոր պատճառները միասին թուլաց-
 րին հատկապես հացահատիկի ավելցուկների իրաց-
 ման խթոնը. հացի արտադրական-բնական սպառու-
 մը, հացի պաշարներ ստեղծելը և այլն բարձրացան ի
 հաշիվ շուկայի հացի առաջարկի կրճատման: Տնտե-
 սական այս կացությունն անքակտելիորեն կապ ու-
 ներ իր սոցիալ-դասակարգային արտահայտության
 հետ: Գյուղի հետագա շերտավորման հետևանքով տըն-
 տեսական կացությունը հնարավորութուն տվեց կու-
 լակության ոգտագործելու իր դիրքերը շուկայում ու
 մասնավորի հետ միասին շուկայի ամբողջ կոնյուկ-
 տուրայի վրա բավականին մեծ ազդեցութուն ցույց
 տալու, այն կուլակության, վորի տնտեսական տեսա-
 կարար կշիռն աճել է, թեև հացի գլխավոր մասը նրա
 ձեռքը չեր:

Կուլակությունը կարող էր ոգտագործել այդ
 կոնյուկտուրան, մանավանդ վոր թե պետական ու թե
 կոոպերատիվ՝ մթերող կազմակերպությունները շու-
 կայում վոչ-համերաշխ գործակցություն չերևան բե-
 րին (փոխարենը տեղի յեր ունենում կատաղի մըը-
 ցում ու հետևապես՝ որյեկտիվ աջակցություն մաս-
 նավորին ու կուլակին), վոչ էլ աշխատանքի ծավալ-
 ման անհրաժեշտ թափ: Միաժամանակ՝ հացամթեր-
 ման հիմնական շրջանների պահանջի պայմանների
 համաձայն պատշաճ ժամկետներին արդյունաբերական
 ապրանքներ փոխադրելու լայն գործառնություններ
 ծավալված չեն յեղել: Մյուս կողմից՝ կուլակազմակեր-
 պությունները, մանավանդ դիսկուսիայի¹ հետևանքով,
 հացամթերման հետ կապ ունեցող հերթական ամենա-

կարևոր խնդիրներ ի կողքով անցան, այն հաշվով, վոր հացամթերումներն ինքնաբերաբար դրական արդյունք կտան, իսկ կուսակցության առանձին տարրերից վճարմանը, մանավանդ գլուղուժ, ընդունակ չեղան հարկ չեղած հարվածը հասցնելու կուլակության ու միաժամանակ ընդունակ չեղան համապատասխան կերպով ակտիվ դերի կոչելու գլուղի չքավոր ու միջակ խավերին:

Այդպիսով ստեղծված տնտեսական կոնյուկտուրան, այդ կոնյուկտուրայի ոգտագործումը կուլակության կողմից, արդյունաբերական ապրանքների բաշխման գործառնական ծրագրի իրագործման ընթացքում կատարած սխալները (ապրանքներ հասցնելու ուշացումը), պլանավորման սխալներն ընդհանրապես (գլուղի վերնախավերի անբավարար հարկում, հացահատիկի գների և գլուղատնտեսական արտադրության այլ արդյունքների գների չափազանց տարբերութուն) արդյունաբերական արտադրության աճման ժամանակավոր հետամնացութուն և, վերջապես, — վոր չափազանց ելական դեր և խաղում, — ապաքարտի (վորի հետ նաև կուսակցական ապաքարտի) ակտիվության անբավարար կազմակերպվածութունը — ահա այս բոլորն ամբողջութամբ առած՝ արտադրական ուժերի ու սրանց սոցիալիստական սեկտորի հսկայական չափով աճող ֆոնի վրա ծավալվող տնտեսական մեծ դժվարութունների հասցրին, այնպիսի դժվարութունների, վորոնք տեղի չեյին ունենա, չեթե տնտեսության հիմնական տարրերը ժամանակին ու ճիշտ հաշվեկշռվեյին և տնտեսական ու կուսակցական ապաքարտների թերութունները ժամանակին վերացվեյին:

Վորպեսզի ընդհանուր տնտեսական ճգնաժամի սպառնալիքը չհղոքացրած լինենք և ապահովենք վոչ միայն քաղաքներին հաց մատակարարելու դործը, այլ և պաշտպանած լինելինք յերկրի ինդուստրացման համար կուսակցության կողմից սկսած թափը, ֆեֆուսմք պետք է մի շարք միջոցներ ձեռք առնենք, վորոնց թրվում նաև արտակարգ միջոցներ: Այդ միջոցներն իրենց մերձավոր նպատակն ելին դրել.—

1) Ուժեղացնել արդյունաբերական ապրանքների արտադրությունը և այդ ապրանքների մատակարարումը հացամթերման շրջանների գյուղական շուկաներին, նույնիսկ ի հաշիվ քաղաքների ժամանակավոր ապրանքազրկման.

2) Դուրս քաշել դրամով գյուղական կուտակումների վորոշ մասը, գյուղի վերնախավերի հարկման տեսակետից՝ մեկ կողմից, և դուրս քաշած միջոցների ըզգալի մասն արտադրության վրա գյուղում իսկ նպատակահարմար կերպով գործածել՝ մյուս կողմից (գյուղացիական տնտեսության ամրապնդման փոխառություն. ինքնահարկման որենք. վճարումները ժամկետներին գանձելու խիստ դիսցիպլինա և այլն).

3) Հարվածել կուլակներին և ապրանքառու չարահիներին, վորոնք չարամտորեն հացի սպեկուլյացիայեն անում, արհեստական կերպով բարձրացնում են հացի գները ու բանվորներին, չքավորներին և ֆարմիր բանակին սովով սպառնում (107 հոդածի կիրառում, հացի սպեկուլյացիա անողներից դատարանի միջոցով բռնագանձված հացի 25 տոկոսը վարկի ձևով գյուղի չքավորությանը բաշխել և այլն).

4) Ստեղծել հացամթերման կազմակերպությունների իսկական միացյալ ճակատ և դադարեցնել մրցումն այդ կազմակերպությունների միջև.

5) Ապահովել հացի կալուն գներ ստեղծելու խորհրդային քաղաքականությունը՝ արդյունաբերական ապրանքների գներն իջեցնելու քաղաքականության գույքն իրաց, հակառակ այս հարցում գոյություն ունեցող կոոպերատիվ, խորհրդային ու կուսակցական ապարատի առանձին տարրերի տատանումներին.

6) Կուսակցությունը մասնակից դարձնել հացամթերման գործին և հացամթերման կապանիան հաջող տանելու համար վերից-վար մոբիլիզացիայի յենթարկել կուսակցության ուժերը.

7) Ստուգել և գտել խորհրդային կոոպերատիվ ու կուսակցական ապարատը բացահայտ քայքայված այն տարրերից, վորոնք գյուղում դասակարգեր չեն տեսնում ու չեն ուզում կուլակի հետ «կռվել»:

ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլենումը գտնում է, վոր առանց այդ և նման միջոցներ կիրառելու չեյին կարող վերացվել հացամթերման գործում գոյություն ունեցող ամենալուրջ դժվարությունները:

Ուստի միացյալ պլենումը լիովին ու ամբողջությամբ հավանություն է տալիս Քաղբյուրոյի այն գործին, վոր նշված է հացամթերման հարցի վերաբերյալ հունվարի 6-ին և փետրվարի 13-ին առաջարկված հրահանգ-նամակներում:

Այժմ մենք կատարյալ հիմք ունենք արձանագրելու, վոր կուսակցություն՝ վերը հիշած միջոցները, վորոնք վորոշ չափով արտակարգ բնույթ են կրում, հացամթերման գործն ուժեղացնելու մեջ խոշորագույն

հաջողություններ են ապահովել: Յեթե առաջին կիսամյակին առ 1-ն հունվարի հացահատիկներ մթերելու գործն անցյալ տարվանից յետ ե մնացել 128 միլ. փութով, ապա ընթացիկ տարվա չերեք ամսում (հունվարի 1-ից մինչև ապրիլի 14-ը) հաջողվել է 110 միլ. փութ ավելի մթերել, քան անցյալ տարի նույն ժամանակաշրջանում եր մթերված, այսինքն՝ կորցրածը համարյա լրիվ վերականգնել, և բոլոր մշակութիւնների մթերումը (9 ամսվա) կազմում է 644 միլ. փութ՝ անցյալ տարվա 617 միլ. փթի գիմաց: Հետևապես ակնհայտ է մթերութիւնների ընդհանուր գերազանցումը՝ հացահատիկների գծով գոյություն ունեցող մթերման վորոշ պակասով:

Այսպիսով հաջողվեց մեղմել, իսկ այնուհետև վերացնել նաև քաղաքներին, կարմիր բանակին ու բանվորական շրջաններին մատակարարելու գործում գոյություն ունեցող ընդհատութիւնները, կանխել ռեալ աշխատավարձի իջեցումը, լիկվիդացիայի չենթարկել բամբակագործական ու վշագործական շրջանները հացով թերամատակարարելու չերեքութը, վերացնել այդ թերամթերութիւնները փայտամթերման շրջաններում, վերջապես հացի միւնիմալ պահեստներ ստեղծել:

Սակայն կհ-ի և կՎՀ-ի միացյալ պլենումը բոլոր կուսակազմակերպությունների ուշադրությունն է հրավիրում այն բանի վրա, վոր ծրագիրն ի կատար ածելու համար տնտեսական ընթացիկ տարվա մնացած չերորդ յեռամսակում մեր առաջ հաց ու չուղասերմեր մթերելու գործն է ծառացած՝ ավելի մեծ չափով, քան անցյալ չերկու տարվա համապատասխան ժամանակաշրջաններում եր: Այս բանը կուսակցական բոլոր կազ-

յրակերպությունների վրա պարտք եղնում՝ չբավականանալով ձեռք բերած հաջողություններով՝ լարված ու շարժվող վրամբ ու համառությամբ շարունակել կամ պանիան:

III

Ձնալած միջակների վերնախավերի վորոշ անբավականության, մանավանդ՝ տեղի ունեցող խեղաթյուրումների և շեղումների հետևանքով, ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ սլինումն արձանագրում եկուսակցական աշխատանքի բարելավումն ու աշխուժացումը գլուղում, կուլակության դերի և աղդեցության թուլացումը, չքավորների մեջ կատարվող աշխատանքի աշխուժացումը և գյուղացիության հիմնական մասսայի աչքին խորհրդային իշխանության հեղինակության բարձրացումը:

Կուսակցական ու խորհրդային մարմինների կողմից տեղ-տեղ կատարած խեղաթյուրումներն ու շեղումներն ամենավճռական կերպով վերացման են չնթակա և կուսակցութունը պետք է ամենավճռական կոխվ հաստատարի այդ խեղաթյուրումներին ու շեղումներին, քանի վոր այդ չերևյալներն սպառնում են թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական չերկարատև բացասական հետևանքներ տալու:

Այս թվին են պատկանում այն մեթոդները, վորոնք հարվածելով վճռ միայն կուլակին, այլև միջակին, փաստորեն սողոսկում են հանդիսանում դեպի պարենմասնատրման ուղիները, որինակ՝ հացի ավելցուկների բռնագանձում (առանց դատական կարգով 107 հոդվածը կիրառելու), ընդհանրապես հացի ներգլուղական առուծախի կամ հացի «ազատ» շուկայի ար-

գելումը. ավելցուկներ «չերեան հանելու» նպատակով կատարվող խուզարկություններ. խափանիչ ջոկատներ. դյուղացիական փոխառության տոմսերի հարկադրական բաշխում՝ հացի վճարումներ կատարելու և գյուղացիութիւնը դեֆիցիտային սպւրանքներ վաճառելու դեպքում. դրամական հատուցումներ փոստային փոխադրատոմսերով, չերք առաքումների միմասը փոխառության պարտատոմսերով կամ այլ թղթերով և տըրվում. վարչական ճնշում միջակների նկատմամբ. ուղղակի մեթերափոխանակության կիրարկում և այլն և այլն:

ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլենումը ամենակերտորոկ կերպով հայտարարում է, վոր կուսակցական գծի աչդորինակ խեղաթյուրումները վոչ մի առնչություն չունեն վոչ կուսակցության կուրսի հետ՝ ընդհանրապես, վոչ ել այն արտակարգ միջոցների հետ, վոր Կենտկոմը կիրառում եր հացամթերման ընդհանուր կամպանիայի ժամանակ յերևան յեկած հատուկ դըժվարությունների պատճառով: ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլենումը պահանջում է անողոք կռիվ մղել աչդ որինակ մեթոդների դեմ և անհապաղ լիկվիդացիայի չենթարկել նման շեղումներն ու խեղաթյուրումները, քանի վոր աչդ յերևույթները խախտում են կուսակցության տնտեսական քաղաքականության հիմքերը, սպառնում են քաղաքի ու գյուղի միջև գոյություն ունեցող տնտեսական կապին, տապալում են վարկի սխտեմը և սպառնում են թուլացնելու բանվոր դասակարգի ու միջակ գյուղացիության հիմնական մասսայի դաշինքը:

Կուսակցության XV համագումարի լողունդը՝ «ել ավելի զարգացնել հարձակումը կուլակի վրա»՝ կարող

հնք իրագործել «Նոր տնտեսական քաղաքանության» հիման վրա միայն, վոր սոցիալիստական խոշոր ին-
դուստրիալացիայի ու մանր գյուղացիական տնտե-
սության զարգացման միակ ու ճիշտ ձևն է հանդիսա-
նում, այլ և կարող ենք իրագործել պրոլետարական
պետության հեղափոխական որինականության խիստ
կիրառմով միայն: Այսպիսով հարձակումը կուլակության
վրա պետք է զարգանա գյուղացիական տնտեսության
հիմնական մասսաների հետագա ապրանքայնացումով,
տնտեսական շրջանառության ուժեղացումով, քաղաքի և
գյուղի միջև գյուղատնտեսության բարձրացումով (վորի
անբավարարությունը նույնպես ընդգծված է կուսակ-
ցության XV համագումարի կողմից). հարձակումը
պետք է զարգանա կուլակության հարկումը սիստե-
մատիկորեն լծելու միջոցով, նրա շահագործական
ձգտումների սահմանափակումով (աշխատանքի ու կա-
պալի որենսդրություն, մեքենամատակարարման ու
գյուղատնտեսության վարկավորման ասպարիզում
դասակարգային սկզբունք և այլն, և այլն)—մեկ կող-
մից, և գյուղացիության լայն մասսաների ու ամեն
տեսակ կոլեկտիվ տնտեսությունների կոոպերացման
ու գյուղի չքավորներին պաշտպանելու դործն ու շու-
կայի և գյուղական մանր տնտեսությունների վրա պե-
տական պլանային ազդեցության բոլոր ձևերի ու մեթոդ-
ների սիստեմատիկ աճումն ըստ ամենային ու բազմա-
կողմանիորեն պաշտպանելու միջոցով—մյուս կողմից:

«Նոր տնտեսական քաղաքականությունը» հենց
այն ուղին է, վորով հաստատուն ընթանում է կու-
սակցությունն ու վորի միջոցով միայն հնարավոր է
երկրի տնտեսությունը սոցիալիստական ձևով վերա-

կազմելու: Ուստի և ՆԵՊ-ը վերացնելու մասին կուլա-
կության, նսպամանների և նրանց «գամբեթերի» (ձայ-
նակցողներ) մղած չարամիտ ագիտացիան կուսակցու-
թյան վճռական հակահարվածը պետք և ստանաւ: Այս
խակ պատճառով կուսակցութիւնը մանավանդ վճռա-
կան կերպով պետք և լիկվիդացիայի լինթարկի այն
խեղաթյուրումներն ու շեղումները, վորոնք, չնայած
ԿԿ-ի Բաղբյուրոցի կողմից համապատասխան նախա-
զգուշացումներին, գոյութիւն ունեն գործնականում
ու դեռևս վերջնականապես վերացված չեն:

ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլենումն այն կարծիքին
է, վոր հացամթերման գործում այս տարի տեղի ու-
նեցած դժվարութիւնները չի կարելի պատահակա-
նութիւն համարել: Հացամթերման այս դժվարու-
թիւնները կապ ունեն յերկրի ինդուստրացման արագ
թափի դժվարութիւնների հետ, այն դժվարութիւն-
ների, վորոնց թելադրողը պրոլետարական պետութեան
միջազգային ու ներքին վողջ հանգամանքներն ու
տնտեսութեան պլանային դեկավարութեան սխալներն
են: Այս դժվարութիւնները խորացան ու բարդացան
այն պատճառով, վոր գյուղի կուլակ մասն ու չարա-
շահները ձգտում էին ոգտագործել դրանք (դժվարու-
թիւնները), արհեստական կերպով բարձրացնել հացի
գներն ու կործանել գների վերաբերմամբ ունեցած
խորհրդային քաղաքականութիւնը: Ուստի այն չա-
փով, ինչ չափով հացամթերման գործում գոյութիւն
ունեցող դժվարութիւնները դեռևս կարող են հետա-
գայում էլ յերևան գալ, կուսակցութիւնն էլ ավելի
վճռական կերպով պետք է ձգտի այն բանին, վոր ան-
դուլ կերպով իրագործվի կուսակցութեան XV համա-

գումարի լողունները՝ «կուլակուլթյան վրա հետագա հարձակում գործելու», մասնավոր շուկայի կարգավորման և պետական ու կոոպերատիվ կազմակերպութունների կողմից գյուղացիական անհատական տնտեսութունները սխառեմատիկորեն սոցիալիստական հունի մեջ քաշելու նմախն:

Միացյալ պլենումը միաժամանակ գտնում է, Վոր հացամթերման գործում գոյութուն ունեցող դժվարութունների լիկվիդացիային զուգընթաց պետք է վերացվի կուսակցութւան կողմից ձեռք առած միջոցների այն մասը, Վոր արտակարգ բնույթ է կրում:

ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլենումը հանձնարարում է Քաղբյուրոյին՝ ըստ ամենայնի միջոցներ ձեռք առնել չեկոզ տարվա հացամթերման կամպանիայի ժամանակ ապահովելու մթերումների անսպաթաք ընթացքը հաշվի առնելով այն դասերը, Վոր կուսակցութունն է արել ընթացիկ տարվա հացամթերման սխալներից ու թերութւուններից:

Տնտեսական հիմնական միջոցների բնագավառում ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլենումն անհրաժեշտ է համարում՝ ամենից առաջ ժողովրդական տնտեսութւան առանձին տարրերի մեջ ավելի ճիշտ հարաբերութւուն ստեղծել և այդ տարրերը հարկ չեղած պլանային կարգով իրար հետ կապել:

Արձանագրելով արդյունաբերութւան արտադրանքի դպարի ավելացումը, մանրամասն այն ապրանքների ավելացումը, Վորոնք լայն շուկաներ են սպասարկում (անցյալ տարվա 15⁰/₀-ի դիմաց 27⁰/₀ աճում), ԿԿ-ի ԿՎՀ-ի և միացյալ պլենումը հանձնարարում է Քաղբյուրոյին՝ միջոցներ ձեռք առնել:

առաջին՝ ամառն արտադրական ապրանքների սեկտորային կրճատումներից խուսափելու, չերկրորդ՝ առավել չափով անհրաժեշտ (ХОДОВЫХ) արդյունաբերության ապրանքների պահեստներ ստեղծելու—հասցամթերման կամպանիայի չեռուն ժամանակ այդ ապրանքների շարժեր (маневрирования) կատարելու համար:

Արձանագրելով այն հանգամանքը, Վոր անցյալ տարվա համեմատութեամբ պետութիւնը կրկնակի չափով ավելի չե սերմացուի վարկ տվել (անցյալ տարվա 13 միլ փթի դիմաց 27 միլ. փութ), Վոր պայմանավորման հետևանքով գյուղացիութեանը տրված կանխավճարի չափն ավելացել է 135 միլ. ռուբլուց ավելի. Վոր կոլլեկտիվ տնտեսութեան շինարարութեանն արած հատկացումների վճարումը կրկնակի չափով ավելացել է (կոլլեկտիվ տնտեսութեաններին ընդամենը բաց է թողնված 65 միլ. ռուբլ. հատուկ միջոցներ). Վոր գյուղատնտեսութեանն արված հատկացումներն ընդհանրապես ավելացել են (717 միլ. ռուբլուց ավելի է),—մի բան, Վոր գյուղացիութեան զարգացման վրա մեծ ազդեցութիւն պետք է ունենա, —ԿԿ-ի և ԿՂՀ-ի միացյալ պլենումը հանձնարարում է Բաղրյուրոյին ամեն միջոցներ ձեռք առնել ապահովելու ցանքսատարածութեան բերքատվութեան աճումն՝ ընդհանրապես և հացահատիկների մշակույթների ցանքսատարածութեան աճումը՝ մասնավորապես, այլ և ամեն միջոց ձեռք առնելու կոլլեկտիվ տնտեսութեանների արտադրական բազան, հատկապես բարդ մեքենաների ու տրակտորների արտադրութիւնը ԽՍՀՄ-ի ներսում ընդարձակելու միջոցով:

Արձանագրելով սակավազոր տնտեսութեաններ


35%/-ի աղատումը գլուղհարկից, վորպես վերջին տարինների կարևորագույն նվաճումներից մեկը և արձանագրելով գլուղհարկի ավելացումը գլուղի վերնախավերի համար, ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլենումը հանձնարարում և Քաղբյուրոյին հատուկ ուշադրություն դարձնել՝ կուլակության վոչ-չերկրագործական չկամուտները բռնելու, հացահատիկի արտադրության հարկման և գլուղատնտեսության այլ ճյուղերի հարկման վրա հարկույթների վորոշ վերաբաշխում կատարելուն և ճիշտ՝ որենքով սահմանված ժամկետներ գլուղհարկը դանձելու վրա:

IV.

Վերոհիշյալ հրահանգների իրագործումն ապահովելու և թե պետական ու թե կոոպերատիվ հացաձթերման կազմակերպությունների միասնական ճակատ ստեղծելու նպատակով, վոր մթերման հաջող քաղաքականության և ընդհանրապես ժողովրդական տնտեսության պլանի իրագործման անհրաժեշտ նախադրյալն և հանդիսանում, ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ Պլենումը վորոշում և.

Մքերման ապաշրջանի վերակզմության ասպարիզում.

1) Կատարել հացամթերող ապաշրատների միացում (ուսիֆիկացիա), Хлебодуодукт-ի և տեղական պետմթերման աղացների կազմակերպությունների միացման միջոցով՝ Մոյուզիլեր համամիութենական բաժնետիրական ընկերություն կազմակերպելով (Ուկրաինա, Կավիլեր, Սիբիրոս, Կազխլեր և այլն), այս ընկերությունների ապաշրատն ու գլուղը Մոյուզիլերին անձնելով ու հիշյալ գլուղը համապատասխան որդան-



ների աղյուսների հաշվին անցկացնելով Սոցուզխեր-ի աշխատանքների ասպարիդում տեղական մարմինների աջակցության ազդեցությունն ասահովելով. բաժնետիրական կապիտալի կառուցվածքն ու միջերվող ապրանքներից տեղական բյուջեներին մասնատրումներ անելուն համապատասխան շահույթների բաշխում կատարելու միջոցով՝ Սոցուզխեր-ի հաջող աշխատանքների ասպարիդում բաժնետերերի շահագրգռվածությունն առաջ բերել. այնուհետև ապահովել իր միջերման ավելորդները (տեղական կարիքները հոգալու համար) - աղացների այլ միավորումներին պայմանով հանձնելու գործը, այն միավորումներին, վորոնք Союзхлеб-ի հետ չեն միանում:

2) Պետական և սպառողական կոոպերատիվ միջերող կազմակերպությունների (մեկ կողմից՝ Սոցուզխերը և մյուս կողմից Ցենարոսսյուզն ու Վուկոպուկուկան) նկատմամբ հիմնական պայմանագրերի սխտեմ մշակել ու կյանքում կիրառել, այնպիսի պայմանագրերի, վորոնց համաձայն սպառողական կոոպերացիայի սխտեմով միջերված ամբողջ հացը, համամիութենական Պլանի կարգով (այսինքն չհաշված տեղական արտապլանային միջերումները), անմիջականորեն հանձնվում և «Союзхлеб»-ի մերձակա շտեմարանները (եղևատոր), աղացները, կայարանամերձ ու նավահանգիստներին կից կայանները:

3. Աղացների ու շտեմարանների աշխատանքների համար ստեղծել այնպիսի պայմաններ, վորոնք ապահովելին այդ աղացների ու շտեմարանների բեռնավորումն ու բնակչության անմիջական կապը նրանց հետ (կոոպերատիվների միջոցով միջերված հացի ան-

միջական փոխադրություն. ուղղակի աղացներ ու շտեմարաններ տարած հացի դների առանձին հավելումներ և այլն)։

4) Ապահովել ՄՍՊՕ (Մոսկվայի Սպառողական ընկերությունների Միություն) մթերման դործն՝ անմիջականորեն գլխավոր պալմանագիր կնքելով հիմնական մթերողների հետ։ Հիմնական մթերողների կողմից գլխավոր պալմանագրերը կատարելու նպատակով ՄՍՊՕ-ի համար մթերման ու բարձման հատուկ շրջաններ ստեղծել, հատուկ աղացներ՝ Մոսկվայի համար իրավունք տալով ՄՍՊՕ-ին այդ շրջաններում լիազորներ ունենալու, վորոնք հետևեն, վոր ՄՍՊՕ-ի հետ կնքած պայմանների համաձայն՝ գլխավոր մթերողներն իրենց պարտականությունները կատարեն և վորոնք (լիազորները) մթերումների ու բարձումների մասին իրազեկ պահեն ՄՍՊՕ-ը։

Կարգավորող ասպարաաթի վեռակազմության ասպարիզում ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլենումը վորոշում և։

1) ԽՍՀՄ Առևտրի ժողկոմատին համամիութենական Կոմիտարիատի իրավունք ասպահովել՝ թե մթերումների դործը կազմակերպելու և կարգավորելու ասպարիզում և թե պլանային կարգով կատարվող մթերումներից ստացվող հացի ռեսուրսներն ոգտապործելու ասպարիզում։

2) Առևտրի ժողկոմատի ասպարաաթի ամրադնդում անցկացնել տեղերում թե աշխատողների վորակը բարձրացնելու և թե աշխատող պերսոնալի քանակական կողմն ուժեղացնելու տեսակետից։

3) ԽՍՀՄ-ի Առևտրի ժողկոմատին առնթի

ստեղծել՝ հիմնական մթերոգների որգանների ղեկավարներից ու հացամթերման կարևորագույն շրջանների ներկայացուցիչներից կանոնավոր կերպով հրավիրվող խորհրդակցութիւններ՝ ժողկոմի անմիջական ղեկավարութեամբ գործառնական պլաններ, հացամթերումների մեթոդներ և այլ միջոցներ մշակելու համար:

ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլենումը հատուկ ուշադրութեւն ե հրավիրում կոոպերացիան (սպառողական և գյուղատնտեսական) ամեն կերպ ամրապնդելու անհրաժեշտութեան, կոոպերացիայի աշխատողների բնակազմն ուժեղացնելու, կոոպերատիվ ներքին դիսցիպլինան ամրապնդելու, գյուղացիական բնակչութեւնն ընդգրկելու գործն ընդարձակելու, կոոպերատիվ հասարակայնութեւնը զարգացնելու, դասակարգային քաղաքականութեւնն ապահովելու և այլ միջոցների վրա:

Ամեն կերպ ձգտելով ապահովել պետական ու կոոպերատիվ վողջ կազմակերպութեւնների յելուցթի միասնականութեւնը հացի շուկայում՝ ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլենումը կուսակցական կազմակերպութեւնների վրա պարտականութեւն ե դնում վճռական պայքար մղելու՝ մթերման քաղաքականութեան ու դիսցիպլինայի բոլոր և ամեն տեսակի խախտումներ կատարելու և աչքաթող անելու յերևուցթների դեմ, դեպի կոոպերատիվ պլանը տեղականութեւն, գերատեսչականութեւն ու ձևական վերաբերմունք ցուցց տալու դեմ (հացի և խարի հաշվեկշիռ, չհիմնավորված պահանջներ և այլն):

Անհրաժեշտ համարելով հացամթերող, վերամշա-

կող ու. սպառող տնտեսական վողջ ապարատի բացիո-
նալացումը, ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլենումը պար-
տականութիւնն է դնում խորհրդային ապաստարատի կոմ-
մունիստ աշխատողներին ու կուսկազմակերպութիւն-
ներին վրա՝ վերադիր ծախքերի զգալի իջեցում ձեռք
բերել թէ՛ հացամթերման ու սպառման և թէ՛ ալյուր
աղալու և հաց թխելու ամպարիզում:

ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլենումն առաջարկում
է բոլոր կուսկազմակերպութիւններին կրկնակի ուշա-
դրութիւն դարձնել ընդհանուր տնտեսական պլաննե-
րի կատարման գործում անվերապահ հեղափոխական
կարգապահութիւնն սահմանելու վրա, քանի վոր սո-
ցիալիստական շինարարութեան արագ թափի և ալդ
թափի շնորհիւ ծավալվող հիմնական աշխատանքների
պայմաններում, պրոլետարական բոլոր ուժերն ու մի-
ջոցները մեծապէս լարելու պայմաններում տնտեսա-
կան վողջ ապարատում պրոլետարական անողոք կար-
գապահութիւնն իրագործելու միջոցով միայն կարելի
է, առանց զգալի սակթաքումների, ընթանալ սոցիա-
լիզմի ուղիով:

ՇԱԽՏԻ ԳՈՐԾԸ ՅԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒ- ԹՅԱՆ ԲԱՑԵՐԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՇԵՏ ԿԱՊ- ՎԱԾ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(Քաճաձեմի ընդունված ընկ. Ռիկովի զեկուցման
առթիվ Համկեկե-ի յիվ ԿՖՀ-ի միացյալ պլենումի
կողմից 1928 թ. ապրիլի 11-ին)

Շախտի գործը Դոնեցի ավազանում չերևան
հանեց հսկահեղափոխական վնասաբեր մի կազ-
մակերպություն: Այդ գործն ստացավ բացահայտ
համամիութենական նշանակություն, վորովհետև նա
հայտնաբերեց բուրժուական հակահեղափոխության
պրոլետարական պետության սոցիալիստական ինդուս-
տրացման գեմ մղող պայքարի նոր ձևերն ու նոր
մեթոդները: Գործի քաղաքական նշանակությունն
ընդգծվում է այն բանով, վոր Դոնբասի այդ ֆեա-
սաբեր կազմակերպությունը, վոր ստեղծված է նախ-
կին հանքատերերի և առաջնորդում առանձնապես ար-
տոնյալ դրություն վայելող մի խումբ մասնագետնե-
րի կողմից՝ կապ եր հաստատել նախկին ուսական և
ոտարերկրյա սեփականատերերի, ինչպես և ոտարեր-
կրրյա ռազմական հետախուզության հետ՝ բացի ու-
րի ինդիւրներից նպատակ եր դրել տապալել խոր-
հրդային Միության պաշտպանության գործը և ան-
միջականորեն նախապատրաստել ինտերվենցիա ու
պատերազմ Խ.Ս.Հ.Մ. դեմ: Դոնբասում հայտնաբեր-
ված հակահեղափոխական դավադրությունը, ինչպես
և տնտեսական ֆեափոխություն մի շարք այլ փաս-
տերը՝ սաբոտաժ կայն, վկայում են, թե սոցիալիզմի

կառուցման գործում մեր պրոլետարական պետութ-
 թյունը հարկադրված է խնչալիսի բացառիկ դժվարու-
 թյուններ հաղթահարել: Յեւ չեթե, չնայած այդ բո-
 լորին, խորհրդային պետությունն արագորեն առաջ է
 ընթանում տնտեսական վերականգնման և աճման
 ուղիով, ապա դա մի նոր տպացույց է խորհրդային
 սխտեմի և մասնավորապես խորհրդային արդյունա-
 րերության ունեցած բացառիկ առավելությունների,
 նրա հսկայական ներքին ուժերի բովանդակության և
 և ցայտուն կերպով ընդգծում է բանվոր դասակարգի
 ղեկավարութեամբ ԽՍՀՄ-ում տարվող տնտեսական և
 կուլտուրական վերելքի ամենալայն հնարավորու-
 թյունները:

Այդ դժվարությունները հաղթահարելու գոր-
 ծում վորոշ դեր խաղաց և այն հանգամանքը, վոր
 Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո այս տասը
 տարվա ընթացքում տեխնիքական ինտելիգենցիայի
 մեծ մասն անկեղծորեն գործակցեց խորհրդային իշ-
 խանության հետ՝ աջակցելով չերկրի ինդուստրացման
 գործին:

Միաժամանակ չերեան բերած այդ դավադրու-
 թյունը բաց է անում մեր տնտեսական աշխատանքի
 է հենց տնտեսավարության սխտեմի ազադակող պա-
 կասություններն ու սխալները, մեր աշխատակիցնե-
 րի կոմմունիստական աչալրջության և մեր դասա-
 կարգային թշնամիների հանդեպ հեղափոխական հո-
 տառության բթացումը, բանվորական մասսաներին
 արտադրության ղեկավարության ասպարեղ ներգրա-
 վելու աշխատանքի անբավարար լինելը, ղեկավար
 որդանների ու մասսայական կաղմակերպություննե-

րի—պրոֆեսիոնալ և կուսակցական—կտրվածութիւնը, բանվորների առորչա պահանջներից և կարիքներից ու տնտեսական շինարարութեան նկատմամբ կուսակցական ղեկավարութեան բացորոշ թուլութիւնը:

Դոնբասի որինակն առանձնապէս ցայտուն կերպով ցուցաբերում է մեր հետեւյալ թերութիւնները.—

ա) Տնտեսաբար ղեկավարների աշխատանքի մեքոզները յեւ վերաբերմունքը դեպի մասնագէտները: Դոնբասի որինակից յերևում է, Վոր շատ ձեռնարկութիւններում ղեկավարները մինչև այժմ եւ առավելապես արդունաբերութեան վառ կումիսարի դերի մեջ են մնում, այսինքն ձեռնարկութիւնը փոխանակ իրոք կառավարելու, նրանք բավականանում են այսպէս ասած «ընդհանուր ղեկավարութեամբ»: Փոխանակ նրանց հետ աշխատելով սխտեմատիկաբար սովորելու, տնտեսավար-կոմմունիստները, վորոնք չեն աշխատում բարձրացնել իրենց արտադրական-տեխնիքական վորակավորումը, հաճախ ստեղծվում է դեպի մասնագետների աշխատանքը կուլը վատահութիւն: Փոխանակ աչալուրջ կոնտրոլի, փոխանակ մասնագետների վրա խիստ վերահսկողութիւն սահմանելու և մասնագետների վրա նրանց կատարած աշխատանքի համար խիստ պատասխանատվութիւն դնելու՝ այս բոլորի փոխարեն գերադասվում է առանց ստուգման պատրաստի ծրագրերն ու առաջարկները վավերացնել: Վորպէս կանոն, հաստատված ծրագրերի ստուգումն ու կատարումը գոյութիւն չունի: Փոխանակ մասնագետների աշխատանքն ստուգելու, փոխանակ բարձրորակ և աշխատանքի մեջ ստուգված մասնագետներ ընտրելու և նրանց գործնական աշակ-

յուլթյունն յուշոյ տալու, իսկ անբարեխիղճ սարսուռ-
 նիկներին դեմ սիստեմատիկ, կտրուկ պայքար մղե-
 լու՝ այդ կարեւորագուցն խնդրի վրա լուրջ ուշադրու-
 թյունը բացակայում եւ Արտադրութեանը նվիրված
 մասնագետներին աշխատանքի հաշոյ ընթացքի հա-
 նար փոխանակ հասարակական նպատակներ պայ-
 մաններ ստեղծելու՝ ստեղծում են նրանց առանձին
 խավերին մերձեցում բարեկամական-կենցաղային հո-
 դի վրա (միատեղ քեֆեր, քաղքենական վերաբեր-
 մունք նրանց աշխատանքի գնահատման խնդրում
 ելն)։ Նման դրութեան անթույլատրելիութիւնը հատ-
 կապես վորոշակի արտահայտվում ե ներկա մոմեն-
 տում, յերբ տնտեսական շինարարութեան թափը,
 մասնավորապես հիմնական աշխատանքների թափը
 հսկայական չափերի չեն հասնում։ Ներկա պայմաններ-
 ում առանձնապես անթույլատրելի չեն, վոր տնտեսա-
 վարները ծանոթ չլինեն ձեռնարկութեան արտադրա-
 կան-տեխնիքական կողմերին, հաճախակի մի աշխա-
 տանքից մյուսին անցնեն, ծանրաբեռնված լինեն
 վոշ-արտադրական բնույթ կրող գործերով (հաշվե-
 տվություններ, զեկուցումներ, ուղեորումներ դեպի
 կենտրոն) և այլ պայմաններ, վոր տնտեսավարներին
 դարձնեն կոմիսարներ, այն ել վաստիպի կոմիսար-
 ներ, այսինքն աշխատակիցներ, վորոնք իսկապես չեն
 համապատասխանում հանձնարարած գործին։

Մինչդեռ դեպի՝ ձեռնարկութեան աշխատանքը
 կարմիր մասնագետների հոսանքը նույնպես միան-
 գամայն անբավարար ե։ Յերիտասարդութեան շար-
 քերից աշխատանքի չեկած կարմիր մասնագետները
 հաճախ բացահայտ թշնամական վերաբերմունք են

դտնում հին մասնագետների կողմից: Մյուս կողմից՝ ալլերկրյա մասնագետների և ալլերկրյա տեխնիքական ոգնությունը կատարվում և առանց հարկավոր դեկավարության և վերահսկողության:

Ինժեներների ու տեխնիկների պրոֆկապակերպությունները համակլած են կապտաչական վոգով և նեղ համքարական տրամադրություններով: Հաճախ պրոլետարիատին անհարազատ տարրերը նրանց գըրավում են և ալլալիսով նրանք իրենց հակադրում են պրոլետարական պետությանը և պրոֆմիություններին և աշխատում են փաստորեն առանց վերջինների ղեկավարության: Դրա հետևանքով բուրժուական մասնագետներից առանձին սաբոտաժային տարրերը հարկավոր հակահարված չեն ստանում իրենց գործին բարեխղճորեն վերաբերվող ինժեներների և տեխնիկների մեծ մասի կողմից:

Չնայած արտադրության բանվորներից առաջ քաշվածների կադրերի սոճման (սկսած տասնապետներից ու վարպետներից մինչև ցեխի պետերը), այնուամենայնիվ նրանց հանձնարարված ալլ հատկապես նոր դործը սովորեցնելու համար բավարար ջանք չի գործադրվում: Նրանց ֆունկցիաները հաճախ հասնում են մանրունքների և վարչական կարգով վարում են բանվորներին վերաբերող՝ մասնագետների համար «անհաճո» գործերը: Դիչ չեն միակողմանի կերպով բացառապես կոմմունիստներ առաջ քաշելու դեպքերը, մի չերևուլթ, վոր սպառնում և կուսակցականներին բանվորներից կտրելու և նպաստում կուսակցական կազմակերպությունների մեջ կարյիրիզմ ստեղծվելուն:

բ) Պրոֆէսիուրութունները լեզվաբանագիտական դեկամպարտումն առաջին հերթին պետք է կատարվի մասնավորապես ներգրավված։ Մասնակցությունը պետք է ունենան ինչպես գիտնականները, այնպես էլ ընդհանուր հասարակությանը։

Արտադրութեան պլանի և ընթացքի մասին բան-
վորներին իրազեկ պահելու գործը հաճախ ձեւական
բնույթ է կրում միայն, արտադրական խորհրդակ-
ցութեաններում արտադրութեան, նրա ռացիոնալի-
զացիայի ու հիմնական աշխատանքների հարցերը չեն
մշակվում, իսկ վերոջ դեպքերում վարչութեան աշխա-
տանքի թերութեանները քննադատութեան լենթարկ-
վելու պատճառով բանվորների դեմ նույնիսկ հալա-
ծանքնիր են չեղել։ Պրոֆմիութեանները սխտեմա-
տիկաբար չեն աշխատում արտադրական խորհրդ-
ակցութեանների նշանակութեանը բարձրացնելու
համար։ Խորհրդակցութեանների հազվագեղ հրավի-
րումները, տեխնիքական կազմը, յիրքիմն եւ կոմմու-
նիստ վարիչներն արտադրական խորհրդակցութեան-
ների աշխատանքներն առ վոչինչ են համարում, և
ընդունված վորոշումների իրագործման վրա անհրա-
ժեշտ հսկողութեան չկա։ Արժեքավոր առաջարկներ
ու գլուտիւրի պարգեատրութեան ֆոնդը բոլորովին չի
ողտադործվում, իսկ առանձին արտադրութեաննե-
րում նույնիսկ այդպիսի մի ֆոնդ չի զատված։ Միան-
գամայն անբաւարար է դրված պրոֆմութեան որդան-
ների տնտեսական աշխատանքը՝ շրջկոմներում, նա-
հանգական բաժիններում, կենտրոնում, միջմիութե-
նական կազմակերպութեաններում, հատկապես հիմ-
նական շինարարութեան, արտադրութեան ռացիոնա-

լիզացիայի, ինչպես և ինքնարժեքի իջեցման ձեռնարկումների գործադրման և արտադրական խորհրդակցութունների ղեկավարման ուղղութիւններով:

Մյուս կողմից պրոֆկազմակերպութիւնները չեն պահպանում իրենց «դեմքը», այսինքն չեն կատարում իրենց հատուկ դերը՝ բանվորների առույա կարիքները պաշտպանելու վերաբերմամբ: Պրոֆմիութենական աշխատակիցների հեղինակութիւնը փոքր է, թույլ են նրանց առույա կապը բանվորների հետ՝ գործարանում, հանքահորերում, հանրակացարաններում և այլն: Բոլորովին անբավարար է պրոֆմիութիւնների պայքարն աշխատանքի որենսդրքի խախտումների դեմ և ընդհանրապես բանվորական հարցի խորհրդային քաղաքականութեան ելութեան խեղաթելութիւնների դեմ, ինչպես որինակ՝ բանվորներին չգրկեն տոների նախորդակին կրճատված բանվորական որից, ձեռնարկութեան ստեղծած պայմանների հետեւանքով չոգտադործած ժամերի վարձատրութիւնը չտալու վարչութիւնների պրակտիկայի դեմ, արձակուրդների և արտհագուստի մասին չեկած կանոնների խախտման դեմ և այլն: Աշխատողկոմատի և պրոֆմիութիւնների որդանները ծայրաստիճան թույլ պայքար են մղում աշխատանքի պաշտպանութեան և տրավմատիզմի հանդեպ վարչութեան անուշադրութեան դեմ: Դիչ դեպքերում են միայն պատասխանատվութեան կանչվում այն անձինք, վորոնց ղանցառութիւնը դժբախտ պատահարների պատճառ են դառնում, անուշադիր են այդ գործում նաև ԲԳՏ և դատախազութեան որդանները:

գ) Կուսակցական ուղաճեմքը չի օճեցաւկամ աշխատեմքի դեկավարութիւնը. — Կուսակցական կադմակեր-

պուլթյունների տնտեսական աշխատանքի ղեկավարութ-
 թյունը հաճախ սահմանափակվում է ղեկավարտիվ բա-
 նաձևերով: Ընդհանուր առմամբ տնտեսական մարմին-
 ների վերաբերյալ ընդունած դիրեկտիվների կենսագործ-
 ման ստուգումը բացակայում է: Առանձնապես զգալի յե
 տնտեսական թերությունների ու պրոֆեսիոնալ և կու-
 սակցական մարմինների սխալների մասին դեպի բան-
 վորների հայտարարություններն անբավարարողադրու-
 թյուն: Բացակայում է պատշաճ ղեկավարությունը պրոֆ-
 միություններին՝ թե՛ արտադրության ղեկավարության
 գործին բոլոր բանվորներին մասնակից դարձնելու և թե՛
 բանվորների շահերը համառոտ են պաշտպանելու, չերը
 վարչությունը խախտում է աշխատանքի որենքները,
 կամ կոպիտ է վարվում բանվորների հետ և այլն: Շատ
 հաճախ կուսակցական տեղական կազմակերպու-
 թյունները բավականանում են միայն տեղական հիմ-
 նարկությունների և կենտրոնական տնտեսական որ-
 դանների թերությունները ձևականորեն քննադատե-
 լով, փոխանակ այդ թերությունները վերացնելու հա-
 մար ակտիվ պայքար մղելու: Աշխատակիցներ հրավի-
 բելիս, ընդհանրապես լրջորեն չեն ստուգում հրավի-
 վածի անցյալ աշխատանքը և հաճախ վատ աշխատան-
 քի համար արձակված տնտեսավարը փոխադրվում է
 մի նոր, նույնիսկ ավելի մեծ աշխատանքի, փոխանակ
 տնտեսական մարմինները նման ելեմենտներից մաք-
 րելու և տնտեսավարների նոր կադրեր առաջ քաշելու:
 Պատասխանատու աշխատանքի նշանակման գործում
 նկատվում է «խնամիություն» և բարեկամական կա-
 պերի «անառողջ չերեույթներ»: Թույլ և կուսկազմա-
 կերպությունների վրա հսկողությունը տնտեսավար-

ների իրենց աշխատանքի մասին բանվորների առաջ հաշվետվութիւններ տալու խնդրի նկատմամբ և դրա հետ տնտեսավարներին բավարարողութիւն չի ցուց տրվում արտադրութեան բարձրացման և իրենց արտադրական-տեխնիքական վորակավորումն ուժեղացնելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու: Շատ դեպքերում կուսկազմակերպութիւնները նշութական կախման մեջ են լինում տնտեսական որդաններին՝ չնայած վոր կուսակցութիւնը կտրականորեն արգելի և այդ:

Տեղական որդանների մի շարք բացերն ու սխալներն ավելի են խորանում կենտրոնական որդանների բյուրոկրատիկ խեղաթյուրումների ու սխալների պատճառով: Այս վերջինների կարգին և պատկանում կհետրոնական որդանների կողմից տնտեսական պլանների հաստատումը և այդ պլանների հաճախակի ալտաճեումները, վորը վցում և ձեռնարկութեան աշխատանքը, պետական միջոցների վատնում ստեղծում և մեծացնում և տնտեսավարների և մասնագետների անպատասխանատվութիւնն իրանց աշխատանքի հանդեպ: Դոնբասի որինակի մեջ այլանդակորեն արտահայտվելն տնտեսավարութեան չափազանցված կենտրոնացման (Դոնուդու) հետեանքները, կենտրոնացում, վոր մի կողմից նպաստում և ստորադաս տնտեսական որդանների բյուրոկրատիկ խեղաթյուրումները, քաշքշուկը, իրավադրկութիւնը և անպատասխանատվութիւնն ուժեղացնելուն, իսկ մյուս կողմից՝ զգալարացնում տնտեսական կազմակերպութիւնների ազդեցութիւնը ձեռնարկութեան աշխատանքի կազմակերպման վրա: Վերջապես բացասական խոշոր նշանակութիւն ունի նաև

այն հանդամանքը, վոր համարյա չի կենսագործված արեսցեւի մասին 1927 թ. հուլիս 29-ին հրապարակված զեկրեսը, մանավանդ այն մասը, վոր սահմանում է ձեռնարկության վարիչների (գիրեկտորների) և տեխնիքական ղեկավարների ու մասնագետների փոխհարաբերությունները և վորով փոխվում է առաջ հրատարակված կանոնադրությունը (ԺՏԿԽ-ի 1926 թ. № 33 հրամանով սահմանված «տիպարային կանոնադրությունը»)։ Այդ պրակտիկան, վորը տեխնիկական ամբողջ կազմի համար ստեղծեց անմիջական կախում տեխնիկական ղեկավարից՝ արդելք եր հանդիսանում գործի կտուվարման մեջ խեղական միություն հաստատելու և նվազեցնում եր ձեռնարկության կառավարչի (գիրեկտորի) դերը։

Կառավարման սխառմում այդ խեղաթյուրումներն անկասկած նպաստում ելին հակահեղափոխական քնասատուների յերկար Ժամանակ անպատիժ մնալուն։

Դոնրասի որինտկով չերեան բերված տնտեսական աշխատանքի խոշորագույն պակասներն ու սխալները բնորոշ են արդյունաբերական շրջանների մեծ մասի համար և դարձնում են հրամայական դրանց վերացման համար մի շարք գործնական ձեռնարկումների անցկացնելը։

1. Մասնագետների վերաբերմամբ

Շախտինսկի գործի առթիվ քննված փաստերը բացառիկ շեղումածությամբ ընդգծում են, վոր մեր արդյունաբերության, տրանսպորտի և այլն մեջ աշխատող գիտության և տեխնիկայի մասնագետների ոգտագործումն անհրաժեշտ է բարելավել։ Այդ նպատակով

ներկայումս հատկապես անհրաժեշտ և նրանց աշխատանքն ուղադիր ստուգման լենթարկել և նրանց հանձնարարած գործի համար խիստ պատասխանատվութիւն դնել նրանց վրա, միաժամանակ նրանց աշխատանքի համար նպաստավոր պայմաններ ստեղծելով: Անխնա պատժելով չարավիտ սարսափեցնելներն ու փաստաւորներին, միևնույն ժամանակ անհրաժեշտ և բարեւալիլ ազնիւ և իրենց գործին նվիրւած մասնագետներին աշխատանքի պայմանները: Այդ տեսակի մասնագետները գերակշռող մասն են կազմում, Բարեխղճորեն աշխատող վորակյալ մասնագետներին ամեն կերպ արտադրական տեխնիկական աշխատանքի գրավելու գործին վնչ մի դեպքում արգելք չպիտի հանդիսանա այն պարագան, վոր նրանց շրջանում գոյութիւն ունեն վորոշ տրամադրութիւններ ու նախապաշարումներ, դրանք դեռևս մնում են, վորպես անցյալի անխուսափելի ժառանգութիւն, բուրժուական կարգերի մնացորդներ: Մասնագետների հալածման դեմ մղվող պայքարը, չնայած, վոր զգալիորեն թուլացել երկուսակցութեան և պրոֆմիութիւնների տարած աշխատանքի շնորհիւ, առաջիկայում ել պետք և առաջ տանել ամենայն հետևողականութեամբ և հաստատակամութեամբ: Դրա հետ պիտք և աշխատել վոր ինժեներների ու տեխնիկների հիմնական մասան իրապես դառնա սոցիալիստական շինարարութեան ակտիւ ու գիտակից աջակցող: Հատուկ ուղադրութիւն պետք և կենտրոնացնել կարմիր մասնագետներին նոր կադրեր պատրաստելու հարցին և նրանց արտադրութեան մեջ ոգտադործելու խնդրի նշանակալից լայնացման:

Յեւնեւոյ վերոհիշյալից Կ. Կ.-ի և Կ. Վ. Հ.-ի միացյալ պլէնումը վորոշում ե. —

1. Միջոցներ ձեռք առնել նպաստավոր պայմաններ ապահովելու տեխնիկական գիտությունները ավելի բեղմնավոր դարձացման համար՝ հատկապես գիտական-տեխնիկական հարցերը համապատասխան մամուլում (մասնագիտական և այլ տեսակի) լայն լուսարանելով և հրապարակով քննարկելով այդ հարցերը թե՛ գիտական տեխնիկաների մասնագիտական կազմակերպություններում, և թե՛ համագումարներում, խորհրդակցություններում, հասարակական լայն ժողովներում ու այդ նպատակով կազմակերպված հատուկ գիսպուտներում և այլն:

2. Հանձնարարել ՀԱՄԿՍ-ի (ВЦСПС) ֆրակցիային լայնորեն ծովալելու պրոֆմիությունների աշխատանքը բոլոր մասնագետների (ինժեներների ու տեխնիկների) շարքերում: Պրոֆմիությունները պետք է ստեղծեն նպաստավոր պայմաններ մասնագետների տեխնիկական վորակավորումը բարձրացնելու, արտադրական խորհրդակցությունների աշխատանքներին ներանց մասնակից դարձնելու, մասնագետների շրջանում մինչև այժմ տիրող կաստայական նեղ առանձնացումն, և նեղ կորպորատիվ տրամադրությունները հաղթահարելու համար, նմանապես՝ նրանց շարքերում արտադրական և պրոֆմիութենական կարգապահությունն ամրացնելու միևնույն ժամանակ ցուցաբերելով հոգատար վերաբերմունք մասնագետների նյութական, կենցաղային և կուլտուրական կարիքները բավարարելու խնդրում:

3. Կազմակերպել ոտարերկրացի մասնագետներ-

ըին սխտեմատիկորեն մեր ձեռնարկություններն աշխատանքի քաշելու գործը, ինչպես և առանձին հանձնարարությունների համար ոտարեբերկրացի տեխնիկական ուժերի ոգտագործումը՝ նրանց նկատմամբ սահմանելով ճիշտ ղեկավարություն, և վերահսկության պահանջվող ձևեր սահմանելով:

4. Ընդարձակել և բարելավել մեր մասնագետների սխտեմատիկաբար արտասահման գործողումների հարցը՝ նորագույն տեխնիկայի նվաճումները չուրացնելու, հատկապես զարկ տալով տեխնիկական բարձրագույն կրթական հաստատությունների ուսանողների շարքերում իրենց ընդունակություններով ավելի աչքի ընկնող ուսանողների և չերիտասարդ մասնագետների գործողումներին:

5. Ապահովել ԺՏԳՍ-ի և Պրոֆմիտելյունների վճռական ազդեցությունը (կուսակցության ղեկավարությամբ) տեխնիկական ԲԿՀ-ում ու տեխնիկումներում ուսանողներ ընդունելու գործում և ԺՏԳՍ-ի վերահսկողությունը՝ այդ հիմնարկությունների ուսուցման գործի վրա: Ընդունելության և առանձնապես դասընթացքն անցնելու համար ապահովել բանվորների գերակշռությունը:

6. Ամրացնել և ընդարձակել ԽՍՀՄ-ի ԺՏԳՍ-ին կից արդյունաբերական ակադեմիան, ինչպես և ընդարձակել կարմիր վերատեսուչների դասընթացները:

7. Առաջարկել ԺՏԳՍ-ին՝ ընդարձակել և ամրացնել առաջ քաշված բանվորներից տնտեսավարական գործի ստորին և միջակ կադրեր (տասնապետներ, վարպետներ և տեխնիկներ) պատրաստող և վերապատրաստող կարճատև դասընթացների ցանցը:

8. Կարմիր մասնագետների նոր կադրեր ստեղծելու և առաջ քաշված բանվորների վերակա-
վորումը բարձրացնելու և այլն գործում ապահովել
պրոֆեսիոնալ կազմակերպությունների մաքսիմում
լայն և ակտիվ մասնակցությունը:

II. Կոմմունիստ ԵՏԵՏԱՎԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Տնտեսական շինարարության աճման և բար-
դության համապատասխան տնտեսավարները մասնա-
դիտական գիտելիքների ձեռք բերելով և արտադրու-
թյան տեխնիկան ուսումնասիրելով՝ պետք և աշխա-
տեն տիրապետել գործի արտադրական տեխնիկական
կողմը: Այդ գործնական տնտեսավարների և տեխնի-
կական ԲԿՀ-երն ավարտող կարմիր մասնագետների
հիմնական կադրից կուսակցությունն այժմ, ավելի
քան յերբեկից, պետք և առաջ քաշի պրոլետարա-
կան կարմիր մասնագետներ, նրանցով վոխարինելով
բուրժուական մասնագետների շրջանից դուրս չեկած
սոցիալիստական շինարարությանն անհարազատ
տարրերը: Դա տնտեսական շինարարության հիմնա-
կան խնդիրներից մեկն է, առանց վորի հաջող իրա-
գործման անկարելի է սոցիալիստական ինդուստրացում:
Այդ կուրսի իրականացումը պահանջում է մի շարք
գործնական ձեռնարկումների արագ գործադրում:
Այդ տեսակետից ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլե-
նումը վորոշում է.

1. Առաջարկել ԺՏԳԽ-ին՝ կարճ ժամանակամի-
ջոցում արդյունաբերական բոլոր ձեռնարկություն-
ներում իրականացնել ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի և Ժող-
կոմխորհի 1927 թ. հունիսի վորոշումը (կանոնա-

դրութիւն պետական արդյունաբերական տրեստների) և ԽՍՀՄ-ի ԺՏԳԽ-ի 1927 թ. հոկտեմբեր 4-ի հրամանը (տիպարային կանոնադրութիւն), վորպեսզի իրապես ապահովվի ձեռնարկութեան կառավարման գործում վերատեսուչների ղեկավարութիւնը և բեկանել ԺՏԳԽ-ի համար 33 հրամանով սահմանված տիպարային կանոնադրութիւնը:

2. Այն տնտեսավարներին, վորոնք մեծ գործնական աշխատանքի դպրոց են անցել և կառավարման գործում ընդունակութիւններ են հայտնաբերել՝ ընձեռնել դիւրութիւններ արտադրական տեխնիկական վորակավորում ձեռք բերելու նրանց ուսուցման, արտասահման գործողութիւնների (ԺՏԳԽ-ի ճշտորեն վորոշած գործերով և նրա խիստ հսկողութեամբ) տեխնիքական և տնտեսագիտական գրականութեան հայթհայթման և այլն միջոցներով:

3. Հանձնարարել ԲԳՏ միջոցներ ձեռք առնել մի ամսվա ընթացքում առավելագույն չափով կրճատելու կենտրոնական և տեղական որգանների կողմից կատարվող ձեռնարկութիւնների հետազոտումները բարձրացնելով այդ հետազոտումների վորակը, ինչպես և պահանջվող չափով ուսումնասիրելու նրանց արդյունքները և հետազոտման հայտնաբերած բացերի վերացման վրա հսկողութիւն սահմանելու:

4. Առաջարկել ԺՏԳԽ-ին արմատապես վերակազմելու Դոնուգուր վերացնելով ավելորդ կենտրոնացումը և ընդարձակելով ստորադաս որգանների (հանքահորերի վարչութեան) ինքնուրույնութիւնը:

III. Մուտք բաժնիդրների նկատմամբ

1. Բանվորներին վարչական տնտեսական աշխատանքի առաջ քաշման գործը կապել այնպիսի միջոցների հետ, վորոնք հնարավորութիւն կտան առաջ քաշվածներին հատուկ դասընթացներում, տեխնիկումներում և այլն, սովորելու իրենց մասնագիտութիւնը ընդարձակել և կարգավորել վորակյալ բանվորների առանձին խմբերի գործուղումն արտասահման մասնագիտական վերապատրաստման նպատակով:

2. Ուժեղացնել պրոֆեսիոնալ և կուսակցական նպաստակիրութիւնների նախաձեռնութիւնը, բանվորներին վարչատեխնիկական աշխատանքներին առաջ քաշելու գործում, միաժամանակ միջոցներ ձեռք առնելով, վորպեսզի վարչութիւնն այդ գործում հարկ չեղած ազդեցութիւնը գործադրի, առաջ քաշվածներին հնարավորութիւն տալու լրիվ պատասխանատւութիւն կրելու իրենց աշխատանքի համար:

3. Ինչպես կուսակցականներին, նմանապես և անկուսակցականներին տնտեսական աշխատանքի առաջ քաշումը կատարել առաջ քաշվող ընկերոջ նոր աշխատանքին իրապես ոգտակար լինելու հարցը խըստորեն քննելուց հետո:

IV. Մասնագների ներգրավումն արտադրութայն դեկավարութայն գործում

1. Բանվորներին պարբերաբար և իր ժամանակին ինֆորմացիա տալ թե՛ արտադրական պլանների և թե՛ դրանց կատարման մասին, առաջվա պես ըստ

ամենայնի միջոցներ ձեռք ստանելով՝ բարեկամելու և բարձրացնելու բանվորների ու ծառայողների աշխատանքային կարգապահութիւնը և բարձրացնելու աշխատանքի արտադրողականութիւնը: Տնտեսական որգանները և պրոֆմիութիւնները նմանապես պետք է ձեռք առնեն հաստատելու ավելի խիստ պլանային և ֆինանսական կարգապահութիւն, ավելի մեծ ճշտութիւն, սխտեմ և պատասխանատվութիւն, վարչական ու տեխնիկական ամբողջ կազմի աշխատանքների մեջ:

2. Միջոցներ ձեռք առնել, վորպեսզի ցեխերում և ձեռնարկութիւններում, արտադրական խորհրդակցութիւնները սխտեմատիկ աշխատանք կատարեն, մանավանդ ձեռնարկութեան ռացիոնալիզացիայի և հիմնական կառուցումների աշխատանքներ անցկացնելու պրակտիկայի վերաբերմամբ:

3. Խոշոր ձեռնարկութիւններում, առանձնապես աշխտեղ, վորտեղ մեծ թերութիւններ են նկատվում շինարարութեան գործում և սարքավորման ոգտագործման մեջ և վորտեղ հիմնական խոշոր աշխատանքներ են կատարվում՝ անհրաժեշտ և բանվորներից ստեղծել ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովներ տեխնիքական կազմի մասնակցութեամբ:

Փորձն ամբողջովին և կատարելապես հաստատեց գործարանային բանվորական կազմակերպութիւնների ընդհանուր սխտեմում բանվորական ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովների, վորպես արտադրական խորհրդակցութիւնների որգանի, գոյութեան նպատակահարմարութիւնը, ուստի անհրաժեշտ է, վոր կուսակցական, պրոֆեսիոնալ և տըն-

տեսական որպաններն ավելի լաչն կիրառեն և ավելի մեծ ուշադրություն դարձնեն նրանց աշխատանքին:

4 Պլենումն առաջարկում է ՀԱՄԿՍ-ին (ВЦСПС) ապահովել տնտեսական աշխատանքի ուժեղացումը բոլոր պրոֆմիություններում, հատկապես հիմնական շինարարության, ինքնարժեքի եժանցման ձեռնարկումներն անցկացնելու և արտադրական հանձնաժողովների աշխատանքների ղեկավարության գործում, պրոֆմիությունների մասնակցության գծով: Կուսակցական և տնտեսական որպանները պարտավոր են այդ աշխատանքում պրոֆմիություններին աջակցել աջակցություն ցույց տալ, վորպեսզի այդ ղերեկտիվան գործով իրականացվի:

V. Դոճբասի բանվորների աշխատանքի յեվ կեճ- ցաղի պայմանները բարելավելու մասին

1. Անհապաղ վերջ տալ աշխատանքի որենքների տեղի ունեցած խախտումներին, միջոցներ ձեռք առնելով, վորպեսզի տոների նախորդակին բանվորական որը կրճատվի, հանգստյան որերին աշխատանքը չկատարվի, կանանց արգելվի ստորերկրյա աշխատանք կատարելու, վորպեսզի բանվորները ձեռնարկության պատճառով չոգտագործած ժամերի համար իրենց վարձատրությունն ստանան: Այս միջոցների իրականացման պատասխանատվությունը դնել Դոճբասի վարչության և հանքագործների կենտկոմի վրա:

2. Դատական խիստ պատասխանատվության կանչել աշխատանքի պաշտպանության և աշխատանքի անվտանգության տեխնիկական անուշադրության մատնող վարչության ներկայացուցիչներին:

3. Առաջարկել ԽՍՀՄ-ի ԺՏԳԽ-ին և Աշխատանքի ու Պաշտպանության Խորհուրդին ընթացիկ տարում իսկ Դոնբասի բանվորական ավանների ջրամատակարարման և բարեկարգման խնդիրները մշակել և հաստատել աշխատանքի վայրերը ջուր հասցնելու հետ կապված ֆինանսական պլանը:

4. Պրոֆորգանների աշխատանքը բանվորական մասսաների կենսական կարիքների սպասարկման ասպարիզում բարելավելու և պրոֆկազմակերպությունների աշխատանքների մեջ բանվորական լայն խավերին ներգրավելու նպատակով՝ վերակազմել Դոնբասի և այլ շրջանների հանքագործների միություն ստորին կազմակերպությունների ցանցն այնպես, վորպեսզի ներկայիս հանքահորերի բլուրոնները ֆարգործկոմիների իրավունքներ ստանան: Այդ միջոցը գործադրելիս հանքագործների միություն կենտկոմը պետք է աշխատի ամրացնել իր որդանների հեղինակությունը և ավելի սերտ կապ հաստատի իր որդանների և մասսաների միջև:

5. Հանձնարարել Ուկրաինայի կոմկուսի (բ) կենտկոմին յերկու ամսվա ժամանակամիջոցում ներկայացնելու Դոնբասի շրջանի բանվորական ավանների խորհուրդների բանվորական կենցաղային կարիքների սպասարկումն իրենց վրա վերցնելու աշխատանքների առաջարկներ:

6. Թե տնտեսական և թե պրոֆ. ու կուս. կազմակերպությունների մոտակա և առաջիկա պարտականությունը համարել հանքագործ բանվորների կենցաղային պայմանների բարելավման ամբողջական հոգսը (բաղանիք, հանրակացարան, ճաշարան ևլն.):

Սոսանձնապես խիստ պատասխանատուություն դնել այդ նպատակի համար բաց թողած գումարների ծախսման ճշտության համար:

VI. Կուսակցական դեկավարության մասին

1. Հավանություն տալ Հյուսիսային Կովկասի Յերկրայի Կոմիտեյի մարտի 22-ի վորոշման՝ Շախտինսկի շրջանի կոմիտեն կազմալուծելու մասին:

Ձ1. Գործադուրկ լուսաշխատավորների մեջ տարվող կուլտ աշխատանքին պետք և ավելի ուշադրություն դարձնել քան այդ տեղի ունեցող միութենական կազմակերպությունների պրակտիկայում:

Մասնավորապես անհրաժեշտ և սխտեմատիկ ուղեություն գործադուրկներին, վերպեսզի թույլ չտրվի մանկավարժական աշխատանքի համար պատրաստված ընկերներին լենթարկել դեկլաիֆիկացիայի (декфалификации): Այդ տեսակ ոգնությունը նպաստելու համար պետք և մաքսիմալ չափով աշխատանքի գրավելու ժողովրդական լուսավորության մարմիններն:

ԱՇԽԱՏԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՄԵՋ

Ձ2. Առանձին ազգային խմբերում, մասնավորապես կուլտուրային ակումբի հետաքննաց ազգությունների մեջ տարվող կուլտաշխատանքի ասպարիզում առանձնապես սուր բնույթ և կրում աշխատավորներին գրականություն (համապատասխան լեզուներով, թե պարբերական և թե վոչ պարբերական) ապահովելու հարցը:

Արձանագրելով այդ ասպարիզում ձեռք բերված մի քանի նվաճումները, համադրումարը միևնույն ժամանակ մատնանշումն գոյություն ունեցող հետևյալ գծավորություններն ու թերությունները հրատարակությունների համար միջոցների քցակալությունը կուլտար վերաբերմունքը դեպի դործը, ազգային փոքրամասնությունների և առանձին միութենական կազմակերպությունների թույլ սպասարկումը: Այդ բացերը վերացնելու համար համագումարն անհրաժեշտ և համարում,

ա) Միութեական մարմինների մասնակցութիւնը համապատասխան մեջմիութեական կենտրոնների հրատարակչական գործունեութեանը և այլ գործնութեան մաքսիմալ ոգտագործումը մեր միութեան անդամների պրոֆիլուտավորութեան կարիքների համար:

բ) Կենտրոնական և մարզային վաչութիւնների պլանային աշխատանքը մեր միութեան գրականութեան հրատարակման համար, դրա համար ոգտագործելով, առաջին հերթին, մեջմիութեական պրոֆմարմինների հրատարակչական կենտրոնները:

գ) Ազգային լեզուներով հրատարակչական գործունեութեան վերաբերյալ ԿԿ ղեկավարութեան ու ոգնութեան ուժեղացում:

Միաժամանակ համազումարը մատնանշում է, Վոր անհրաժեշտ է ավելի ուշադիր և լրիվ կերպով սպասարկել ազգային փոքրամասնութիւնների լուսաշխատավորներին համապատասխան լեզուներով, կազմակերպել ակումբներում ճազգային անկյուններ, և գլխավորապես ազգային հանրապետութիւններում լուսաշխատավորներից հայտնաբերել և դաստիարակել միութեական ակտիվ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

43. Կուլտաշխատանքի միութեական ղեկավարութիւնն ավելի լրիվ իրականացնելու համար անհրաժեշտ է միութեական մարմինների պրակտիկայի մեջ մտցնել կուլտաշխատանքի հարցերի քննութիւնը լայն վարչութիւնների, տեղկոմների պլենումներին, միութեան ընդհանուր և պատգամավորական ժողովներում, կոնֆերենցիաներում: Միութեան նահանգական և դաւառական վարչութիւններում, Վորտեղ կուլտաշխատանքի համար չկա հատուկ ազատութեւ աշխատող, անհրաժեշտ է վարչութեան առանձին անդամներին դրաւել կուլտաշխատանքին սխաթեմատիկաբար մասնակցելու համար:

44. Ստորին կուլտաշխատանքի խորացումն անհրաժեշտութիւն է առաջացնում ամրացնելու այլ աշխատանքի կազմակերպչ կուլտահանաժողովները, ճիշտ կերպով ջոկել նրանց անդամներին, ամեն կերպ ոժանդակութիւն ցույց տալ տեղկոմներին, մասնավորապես լուսաշխատավորի անկյուն և դրաշարան կազմակերպելու գարծում և ապահովել տեղկոմների մաքսիմալ մատնակցութիւնը առանձին ձեռնարկումների մեջ (ղեկուցումներ յերեկուլթներին, հերթապահութիւն անկյուններում, կոնսուլտացիան և այլն):

Առանձնապէս կարևոր և միութենական կազմակերպութիւններ յոչնորթութիւնը գլուհական կուլտանանաթողութիւնների աշխատանքին: Կուլտանանաթողութիւնների թուլութիւնը, իրեն միութենական բջիջների գլուղում, իրենց խնդիրների նկատմամբ հաճախ նկատվող խառնաշփոթութիւնը և անըմբռնողութիւնը հարց են հարուցում նրանց աշխատանքի գիծն ուղղելու և նրանց գերը ուժեղացնելու մասին:

45. Կուլտաթիւնների և կուլտ հանձնաթողութիւնների ապագա-րատների ամրացման խոչընդոտ և հանդիսանում վորակյալ կուլտ-աշխատավորի պակասը:

Սրանից բխում և կարևորագույն խնդիրներից մեկը՝ այն և պատրաստել կուլտ ակտիվ: Այդ նպատակով տնհրաթիւտ և կազմակերպել դասընթացներ կուլտաշխատավորների վորակավորումը բարձրացնելու համար, գումարել պարբերական կուլտկոնֆերենցիաներ, եքսկուրսիա-խորհրդակցութիւններ՝ մշակելու կուլտ-աշխատանքի հարցերը և լուսաշխի տներին կից կազմակերպելու միութիւն կուլտաշխատավորների անկոններ կամ կաբինետներ:

Կուլտաշխատանքի առանձին տեսակները խորացնելու և մասնագիտացնելու նպատակով հանձնարարվում և ինչպես առանձին հարցերի (ակումբային, գրադարանային), այնպես ել առանձին խմբերի սպասարկման վերաբերյալ տեխնիքական ծառայողների, քաղուսաշխատավորների և ուրիշների) կուլտաթիւններին կից պարբերաբար հրավիրել խորհրդակցութիւններ, պրոֆմարմարմիններին կից կազմակերպել ժամանակավոր հանձնաթողութիւններ աշխատանքի առանձին հարցերը մշակելու և կլանքում կիրառելու համար:

46. Դեպի միութենական կուլտաշխատանքն լեղած հետաքրքրութիւն խորացման հետեանքն և տեղերի ձեռներեցելիւն և ինքնագործնութիւն լայն վարգացումն ալդ ասպարիզում: Լէխատանքի առանձին հարցերի մեթոդական մշակման միջոցով, վորարդեն իր արդունքները տվել և, «работник посвящения»-ի եջերում, տեղական կազմակերպութիւնների աշխատանքի փորձի փոխանակման սխտեմը, վոր սահմանված և Կ. Կ. կողմից, հետագայում պետք և խորացվի և ընդարձակվի, ինչպես ավելի մեծ քանակութիւն տեղական կազմակերպութիւններ ընդգրկելու, այնպես ել փորձի փոխանակման նոր մեթոքներ գտնելու ուղղութիւնը, այն և փոխադարձ հետազոտումն, գրագրութիւն միութեական մարմինների ղեկավարութիւնը, «работник посвящения»

-ի և «учительская Газета»-ի եջերում լուսաբանութիւն կուլտաշխատանքի հարցերի, ինչպես նյութերի, հիման վրա, այնպես և մանավանդ միութեան ակտիվիստ և շարքային անդամների թղթակցութիւնների միջոցով:

47. Հաճախ կուլտաշխատանքի պլանաչափ զարգացման արգելք է հանդիսանում արդեն ձեռք բերված նվաճումների և թերութիւնների թույլ հաշվառումը: Անհրաժեշտ է տեղական կազմակերպութիւնների փորձն ու Կ. Կ. դերեկտիվներն ավելի ուսումնասիրել և ոգտադրածել, թույլ չտալով, սակայն, մեխանիքորէն ընդորինակել ան, այլ պետք է հարմարեցնել տեղական պայմաններին: Սկսած կուլտրաթիւնների և լուսաշխի տների ապագարատից և վերջացնելով գաղաւաղային կուլտհանձնաժողովով լուրջ կուլտկադմակերպութիւնների աշխատանքի հաշվառումը պետք է մտքովի կուլտաշխատանքի պլանի մեջ, իբրև ալդ յախտանքի անբաժանելի մասը: Աշխատանքի վորակային հաշվառմանն ու լուսաշխատավորի կուլտուրական պահանջների հաշվառմանը տալով հատուկ նշանակութիւն, անհրաժեշտ է լայն չափով գործադրել կենդանի հաշվառման ձևերը, (յերեկուլթներ, գրուլցներ, դիսպուտներ, կոնֆերենցիաներ, պատի լրադիր, դիտողութիւն լսարանի և այլն): Քանակային հաշվառումը պետք է տարվի Կ. Կ. սահմանված ձևերով, ըստ վորում հատուկ ուշադրութիւն պետք է դարձվի գրութիւնների կանոնավորութիւն և վորակի, դրանցման խնամքով կատարելու վրա և այլն:

Հաշվառումը, վորի նպատակը կուլտաշխատանքի կանոնավոր զարգացմանը նպաստելն է, վոչ մի դեպքում չպետք է դառնա ինքնանպատակ, մի դատարկ ձևականութիւն:

ՖԻՆԱՆՍՍԿԱՆ ՀԱՐՑԵՐ

48. Միութենական կուլտաշխատանքի ընդհանուր ֆինանսական դրութեան վրա խիստ ծանր կերպով անդրադարձավ կուլտաշխատանքին հատկացված 1⁰/₅-ի վերացումը, շատ տեղերում լուսաշխի տների հանելը տեղական բյուջեից, նահանգական միջոցների բացակայութիւնը անպետքացած տների վերանորոգման համար և այլն:

Հաշվի առնելով կուլտֆոնդի թուլութիւնը, միութենական կուլտաշխատանքի, մասնավորապես լուսաշխի տների նշանակութիւնը աշխատավորների վորակավորման բարձրացման գոր-

ծուծ, համագումարն անհրաժեշտ է համարում կուլտաշխատանքի մի քանի տեսակները մոցնել տեղական բյուջեյի ծախքերի մեջ (լուսաքիտի տները, շտատները, վառելիքը, լուսավորութունը, գրագարանների պահպանման ծախքերը և այլն)։

49. Հաշվի առնելով տնտ-արմինների հատկացումների կրճատումը, համագումարն անհրաժեշտ է համարում կուլտֆոնդն այնպես կառուցել, վոր նրա հիմնական մասը կազմի միութենական միջոցների հատկացումներից (մասհանումներից)։

Հաշվի առնելով միութենական միջոցներից կուլտֆոնդի համար կատարվող մասհանումների տնտմաշափությունը և մասհանման տոկոսն ավելացնելու նկատվող տենդենցը, համագումարն անհրաժեշտ է համարում կուլտաշխատանքի համար կատարվող մասհանումն հետագայում աստիճանաբար մեծացնել, իրեն նվազագույն սահմանելով 15%։

50. Բյուջեյի ծախքի մասն այնպես պիտի կառուցվի, վոր կուլտֆոնդի մեծ մասն անմիջապես ծախսվի կուլտաշխատանքի վրա, Պետք է ձգտել ձեռնարկումների մեծ մասը փոխադրել լինքնադրարացման (самоокупаемость) և ունեցած ուժերը լայն չափով օգտագործել լուսաշխի տներում աշխատանքը հասարակայնության սկզբունքներով տանելու համար։

Ա, Մ. Ն. Ուում ընդհանուր միութենական աշխատանքի համար, համաձայն միությունների VII համագումարի վորոշման, մասհանումները կատարվելու լին նահանգական բաժինների և գավառայնությունների կուլտֆոնդներից վոչ ավել քան 50%-ի չափով և այն ել՝ միայն միջմիութենական համագումարների վորոշմամբ։

51. կուլտաշխատանքում ֆինանսական քաղաքականության ասպարիզում վերջին տարին հայտնաբերվեց մի քանի նշվածումներ (նահանգական բաժիններն անցան նախահաշվային գոյության, ընդհանուր միութենական միջոցներից արձանագրված 1/6-ի մասհանումն կուլտաշխատանքի համար, նրա սիստեմատիկ և անշեղ մեծացումը)։

Միության կուլտֆոնդները ծախսելու մեջ նշանակալից կանոնավորությունն առաջացավ շնորհիվ նախահաշվայինների և բյուջեների հաստատման կենտրոնացած սիստեմի և Կ. Կ. կողմից սահմանած հսկողության։

Համագումարն այդ գիծը ճիշտ է համարում և ընդգծում է հետագայում ևս միջոցները խիստ նախահաշվային կարգով ծախսելու անհրաժեշտությունը։

52. Համագումարը, արմուժությունների 7-րդ համագումարի վերջումներին համապատասխան, հալանությունն և տալիս չունալիս Կ. Կ. վարդմանը՝ կազմակերպել ակումբային շինարարության և վերանորոգման ֆոնդ և առաջարկում և անցնել այդպիսի ֆոնդեր ստեղծելուն նաև տեղերում՝ միություն նահանգական, մարզային և կենտրոնական վարչություններին կից, սահմանելով մասնաճյուղեր ընդհանուր միութենական միջոցներից և գրավելով այդ գործին փողովընդակալ լուսավորության մարմինների, գործկոմիտեների և այլ կազմակերպությունների միջոցները:

Համագումարն հաստատում և, վոր այդ ֆոնդի միջոցները կարող են ծախսվել միայն լուսաշխի տների հիմնական վերանորոգման և նրանց համար նոր շենքեր կառուցելու համար:

ԲԱՆԱԶԵՎ ԿԵՆՏՐՈՒՍԱՇԽԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՍԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

(Զեկուցող բճկ. Կիպարիսով)

1. «Работник просвещения»-ի հրատարակչության հնգամյակը, վոր լրացավ ներկա տարվա սկզբին, իր հիմնական արդյունքներով վիճում և, վոր ի դեմ հրատարակչության, կենտրոնաշխին հաջողից լուսաշխատավորների լայն մասսաների պրոֆեսիոնալ և կուլտուր-քաղաքական դաստիարակության, նրանց մի միութենական կազմակերպության մեջ միաձուլած և մեր ապրած պատմական դարաշրջանի կուլտուրական շինարարության խնդիրներին հաղորդակից դարձնելու համար ստեղծել իր հզորությունը մի բացառիկ ապագայում:

2. Համագումարը գոհունակությամբ արձանագրում և, վոր իր հինգ տարվա աշխատանքի ընթացքում հրատարակչությունը հրատարակել և տարածել և խորհրդային ուսուցչության մեջ աճելի, քան 10 միլիոն որինակ գիրք: ստեղծելով բոլորովին նոր խորհրդային մանկավարժական գրականություն և լուսաշխատավորների համար պարբերական հրատարակչությունների նոր խորհրդային սխտեմ: Հրատարակչության անվիճելի նվաճումներից մեկն էլ այն էր, վոր նա 1924 թվին ստեղծեց մասսայական դպրոցի համար նոր խորհրդային դասագրքերի կոմպլեկտ, վորոնք մինչև որս էլ գերիշխող դեր են խաղում Պետհրատի կողմից հրատարակվող դասագրքերի մեջ:

3. Համագումարը գոհունակությամբ արձանակրում և, վոր

հրատարակչութիւնը նշանակալից չափով իր շուրջն է կենտրոնացրել խորհրդային մանկավարժութեան ստեղծագործ ուժեր և ամենալաշն չափով գրավել և յրավում է իր աշխատանքի մեջ պրակտիկ լուսաշխատավորներից նոր հեղինակներին, Համագումարն անհրաժեշտ է համարում գրավել հրատարակչութեան աշխատանքին ազգային հանրապետութիւնների մանկավարժական ուժերը:

4. Համագումարը գոհունակութեամբ է մատնանշում լուսաշխատավորների սպասարկման համար կենտրոնացրած հրատարակչութեան լույս ընծայած պարբերական հրատարակութիւնների սխտեմի հետագա զարգացումը, լավացումն ու կանոնավորութիւնը: Համագումարը մատնանշում է, վոր հրատարակչութեան պարբերական մասնուլում լայն չափով աշխատակցութեան են գրաված ստորին լուսաշխատավորները, վորոնք ներկայումս կազմում են լուսաշխատավորների ժուրնալիստական և թղթակցական ձեւերը: Հրատարակչութիւնը հետադարձում էս գրական-ստեղծագործական աշխատանքի գծով պետք է պահպանի, ամրացնի և զարգացնի լուսավորութեան աշխատավորների լայն շրջանների հետ ունեցած այդ կապը:

5. Համագումարը գոհունակութեամբ մատնանշում է հրատարակչութեան հաշտութիւնները լուսաշխատավորների համար վոչ պարբերական պրոֆեսիոնալ գրականութեան հրատարակման գործում և անհրաժեշտ է համարում հետագայում էս զարգացնել այդ աշխատանքը:

Համագումարն անհրաժեշտ է համարում մատնանշել, իբրեւ խոշորագույն նվաճում, հրատարակչութեան կողմից մանկավարժական հանրագիտակի (Энциклопедия), հրատարակումը, վորի եջերում սխտեմատիկ ձեւով ի մի լի գումարվում խորհրդային մանկավարժութեան տասնամյա փորձը և համաշխարհային մանկավարժութեան մեջ առաջին անգամ խիստ գիտական մարքօփստական լուսավորութիւն և տրվում մանկավարժութեան և ժողովրդական լուսավորութեան հիմնական պրոբլեմներին և հարցերին:

7. Արձանագրելով հրատարակչութեան նվաճումները՝ լուսաշխատավորի ինքնազարգացման աշխատանքի հրակտարակչական սպասարկութեան գծով, համագումարը գտնում է, վոր հրատարակչութեան աշխատանքում այդ սխտեմի հետագա պլանային զարգացումը ստակա ժամանակաշրջանում նրա կարեւորագույն խնդիրներից մեկն է լինելու:

8. Արձանագրելով, վոր միութենական հրատարակչությամբ չույս տեսած արտագրական գրականութիւնն կրում ե առաջն-
յայես սոցդասովարական բնույթ, համագումարն անհրաժեշտ ե
համարում աստիճանաբար անցնել լուսաշխատավորների մյուս
խմբերի, մասնավորապես քաղուսաշխատավորների ե տեխնիքա-
կան ծառայողների հրատարակչական սպասարկութիւնը:

9. Կենտրոնաւոր չի կարեւորագուցն խնդիրը հը-
րատարկչության ասպարիզում համագումարն համարում ե ազ-
գային հանրապետութիւններու ե մարզերի աշխատավորների հը-
րատարակչական սպասարկութան կազմակերպումը: Համագումար-
ըն հանձնարարում ե Կենտրոնական Կոմիտեյին շտապ կարգով
մշակել այդ հարցը ե այդ խնդիրն իրականացնելու համար անց-
կացնել բոլոր անհրաժեշտ միջոցները:

10. Արձանագրելով, վոր գիրքն իր դնով բավականին ան-
մատչելի յե լուսաշխատավորների համար, համագումարն հանձնա-
րարում ե Կ. Կ. ձեռք առնել բոլոր միջոցները, առանց ֆիսս
հասցնելու հրատարակչության նորմալ աշխատանքին, գրքի հե-
տագա հնարավոր եփտնացման համար:

11. Համագումարն հանձնարարում ե Կենտկոմին մշակել
ձեռնարկումների (мероприятий) սխտեմ, վոր ուղղված լինին
լուսաշխատավորական գիրքը տարածելու ե նրա անմիջական
պահանջները մերձեցնելու գործին, ռպտագործելով այդ նպատա-
կի համար Միության տեղական մարմինների ապաւարտները:

12. Ի նկատի ունենալով յերկրորդ ամբողջ հրատարակչա-
կան գործի առաջիկա վերակազմութիւնը, համագումարն հանձ-
նարարում ե Կենտրոնական Կոմիտեյին ամհնախիստ կերպով ե
խնամքով հետեւելու, վոր այդ վերակազմության պրոցեսում լուս-
աշխատավորների հրատարակչական սպասարկության շահերը վոչ
մի կերպ չտուժեն:

ԲԱՆԱԶԵՎ Ռ. Խ. Ֆ. Ս. Հ. ՅԵՎ ՈՒ. Խ. Ս. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈ
ՄԱՏՆԵՐԻ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԱՌԹԻՎ

(գեկուցողներ ընկ. Լուսաշարսկի ե ընկ. Ռյապպո)

Լսելով ընկ. Լուսաշարսկու ե Ռյապպոյի գեկուցումները
Ռ. Խ. Ֆ. Ս. Հ. ե Ու. Խ. Ս. Հ. Լուսժողովատեների գործունեիւ-
թյան մասին, լուսավորության աշխատավորների Համամիութե-
նական VI համագումարը մատնանշելով ժողովրդական լուսավո-

բության գործում մի շարք նվաճումներ, ինչպես ծրագրային-մեթոդական, այնպես եւ ընդհանուր կազմակերպչական ասպարիզում, Հուստոգիկոմատների աշխատանքի գիծն համարում եւ ճիշտ եւ հավանութուն եւ տալիս նրանց ընդհանուր գործունեությունը:

Յերկրի ինդուստրացման շրջանում չիրք ժողովրդական լուսավորության զարգացման պլանը սերտորեն կապված եւ տնտեսական շինարարության ընդհանուր պլանի հետ, տնտեսական լուսավորական շինարարության խնդիրների հաջող լուծման նըպատակով համագումարն անհրաժեշտ եւ համարում իրագործել հետևյալ ձեռնարկումները:

1. Հաստատելով ժողովրդական լուսավորության համարույթ թողնվող գումարների անբավարարությունն ալն ժամանակ, չերը նրա խնդիրները, շնորհիվ ինդուստրացման պլանի եւ ընդհանուր ուսում անցկացնելուն, առանձին կարևորություն են ստանում, պետք եւ աշխատել ձեռք բերել վճռական բեկումն, ժողովրդական լուսավորության աշխատանքի բոլոր հիմնական տեսակներին եւ մասնավոր մասսայական կրթության համար բաց թողնվող գումարները մեծացնելու ուղղությամբ:

2. Ընդհանուր ուսման պլանն անցկացնելու աշխատանքը մի շարք տարիների ընթացքում դառնալու լե Հուստոգիկոմատների գործունեություն կենտրոնական խնդիրը, վորի լուծման համար անհրաժեշտ եւ իրականացնել հետևյալ միջոցները.

ա) Մատնանշելով ուսուցչության եւ տիխնիքական ծառայողների աշխատավարձի անբավարարությունը, վորը նշանակված ժամկետներին ընդհանուր ուսման պլանի իրացումն ապահովող գլխավոր ֆակտորներից մեկն եւ հանդիսանում, համագումարը անհրաժեշտ եւ համարում հետևյալ բյուջետային տարում բավականաչափ բարձրացնել աշխատավարձը, միաժամանակ մղուցնելով ուսուցչիների համար պարբերական հավելումներ աշխատած տարիների համար (за выслугулет)

բ) Յեզած դպրոցական շենքերի դրությունը, դպրոցական ցանցի հետագա ընդարձակումը, լերկու-լերեք հերթի պարապմունքները ամենա անհետաձգելի անհրաժեշտությունը առաջադրում են դպրոցական նոր շենքեր կառուցելու եւ գոյություն ունեցող դպրոցների հիմնական վերանորոգման հարցը, վորի համար եւ պետբյուջեյի դպրոցական շինարարության ծախսերին մասնակցության ուժեղացման հետ միասին լայն չափով պետք եւ տա-

րածվի յերկարատև վարկավորման և դպրոցական շենքերի կառուցման համար ձրիաբար փայտեղեն ապահովելու սխտեմը:

դ) Այլ տեսչութիւնների և հիմնարկութիւնների կողմից գրաված դպրոցական շենքերն ազատելու համար պետք է ձեռք առնել մի շարք վճռական միջոցներ, վոչ մի դեպքում թույլ չըտալով, վոր դպրոցական շենքերը գրավեն այլ հիմնարկութիւնների կողմից:

դ) Ստեղծել կենտրոնական և թե տեղական նշանակութիւն մը դպրոցաշինարարական ֆոնդեր, խստորեն պահպանելով պլանավորութիւնը և ֆոնդերը բաշխելիս ամենայն ուշադրութիւն մը հաշվի առնելով ծախսամասային հանրապետութիւնների և նահանգների կարիքները:

ե) Մշակել դպրոցական շենքերի տեղ, հաշվի առնելով այն, վոր շենքի պլանում անհրաժեշտ է մտցնել մանկավարժական և տնտեսական կազմի համար բնակարանների կառուցումը:

զ) Հոգ տանել քաղաքներում և գյուղերում դպրոցական շենքերի համար հողամասեր հատկացնելու մասին:

է) Ընդհանուր ուսման խնդիրների լուծման սխտեմում դասատուների կադր նախապատրաստելը կարևորագույն նշանակութիւն է ստանում, անհրաժեշտ է անշեղորեն լավացնել և զարգացնել մանկավարժական կրթութիւնի գործը, հեշտացնելով մասսայական ուսուցչութիւն մուտքը մանկ. բուհերը և աշխատել ձեռք բերելու մանկբուհերի մանկավ. տեխնիկումների ուսանողների համար թոշակների բարձրացումը:

ը) Առաջարկել Լուսժողկոմատներին Միութիւնի հետ միասին մշակելու եքստերնատի հարցը մանկբուհերին և մանկ տեխնիկումներին կից մասսայական հիմնարկութիւնների այն աշխատավորների համար, վորոնք ցանկանում են մատնանշված տիպի ուսումնական հաստատութիւնների ծրագրերի ծավալով ձեռք բերել գիտելիքներ:

թ) Հանձնարարել Լուսժողկոմատներին կիրառել կենտրոնաշխի V պլենումի վորոշումը մանկավարժական կրթութիւնի հարցի մասին:

ժ) Անհրաժեշտ է ընդհանուր ուսման հարցերի նկատմամբ գրավել ամբողջ Խորհրդային հասարակայնութիւն և ազգաբնակչութիւն ամենալայն խավերի ուշադրութիւնը, վորի համար լուսորգանները և Միութենական մարմինները իրենց նպատակ են դնելու հիշյալ շրջաններում տանել պլանաչափ և աշխատանք

ծանոթացնելու նրանց ընդհանուր ուսման կոնկրետ խնդիրներին ու ծրագրերին հետ, ամեն կերպ ոգտադործելով այդ նպատակին համար ինչպես ընդհանուր, այնպես էլ միութենական մամուլը:

3. Սոցդասվարի մասսայական հիմնարկների ցանցի դրու-թյունը լինելով անբավարար ուսումնական-տնտեսական սարքա-վորման տեսակետից, վորպեսզի հանգամանքը խիստ բացասա-լար է, անդրադառնում հենց մանկավարժական պրոցեսսի կազ-մակերպման և սովորողների առաջադիմության վրա, գործի այդ կողմը լավացնելու համար պահանջում է ձեռք առնել շտապ մի-ջոցներ: Վերոհիշյալ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է հա-մառորեն աշխատել, վորպեսզի ուժեղացվեն սոցդասվարի մաս-սայական հիմնարկների ուսումնական-տնտեսական սարքավորու-րը լավացնելու համար քաց թողնվող գումարները:

4. Ծրագրային-մեթոդական ասպարիզում | աստիճանի դըպ-րոցների գծով դպրոցական աշխատանքի վորակի բարձրացման համար անհրաժեշտ կազմակերպչական նախադրյալներն ամրաց-նելու հետ միասին պետք է շարունակել ուսուցման ծրագրերի և մեթոդների պարզեցման և ճշտելու աշխատանքը, սահմանելու և ապահովելու գիտելիքների և ունակությունների պարտադիր մի-նուսմում, ստեղծելու աշակերտների և ձեռնարկների հաստատուն, ընտրություն, ուժեղացնելու ուսուցչին ոգնելու գործը նրա ինք-նազարգացման աշխատանքում:

5. Ուժեղացնելով ունակությունների (навыков) լավացման աշխատանքը, անհրաժեշտ է, ամեն կերպ նպաստելով մանկական կոմսունիստական շարժման դարգացմանն ու ամրացմանը, ուժե-ղացնել ուշադրությունը դեպի կոմպլեքսային դասավանդության եյությունը և դպրոցի դաստիարակչական խնդիրները: Պետք է հոգ տանել հնարավոր չափ ամրացնելու և անհրաժեշտ նախա-պատրաստություն տալու պիոներ-խմբերի կոլվարների կազ-րերին:

6. Մի այնպիսի դասագրքի տճող պահանջը, վորը իր բո-վանդակությամբ լինի մարքսիստորեն, հետևողական, իր նյու-թով և շարահյուսությամբ համապատասխանի մանկական հե-տաքրքրությանը և յերեխայի զարգացմանը, լինի գնով մատչե-լի,—մեզ թելադրում է շտապ կարգով ստեղծել այդպիսին: Այս հարցը պետք է դառնա Լուսժողկոմատների ուշադրության կենտ-րոնը, այդ նպատակով նրանք պետք է գրավեն անմիջականորեն մասսայական հիմնարկներում աշխատող մանկավարժներին մաս-

նակցելու դասագրքեր ստեղծելուն, և մինչև նոր դասագիրք մասսայանալուն դործադրութեան համար բաց թողնելը հայտնարե-
րին ուսուցչութեան հասարակական կարծիքը այդ նոր լույս
տեսնող դասագրքի մասին: Նպատակահարմար համարել մշակել
մի շարք ձեռնարկութեան, վորոնք խթան ելին անհրաժեշտ դա-
սագրքեր ստեղծելու համար:

7. Ուսուցչի համար բանվորական գիրք ստեղծելն համա-
րել կարեոր խնդիրներից մեկը, խիստ կերպով հաշիւ տեսնելով
նրա պատրաստականութեան աստիճանը և ուսումնական հաստա-
տութեան տիպի և ծրագրերի առանձնահատկութիւնները:

8. Սոցիալական բարձր տիպի դպրոցի աշխատանքի գծով,
անհրաժեշտ և վճռականորեն ուժեղացնել ուշադրութիւնը դեպի
|| աստիճանի դպրոցները, մանավանդ դեպի նրանց լեռնորդ-
կոնցենտրը, և պրոֆդպրոցները Ուկրաինայում: Մոտակա շրջա-
նում Լուստովկոմատը պետք է ավարտի || աստիճանի դպրոցնե-
րի ծրագրի մշակումը, լավացնի բարձրատիպ դպրոցների աշխա-
տանքի մեթոդական ղեկավարութիւնը ժողովրդական լուսավո-
րութեան մարմինների կողմից և բարձր տիպի դպրոցների սովո-
րոգների կազմի լրացումն ապահովի բանվորա-գյուղացիական
աղգարնակչութեան լեռնարաններով:

9. Տարրական պրոֆեսիոնալ նախապատրաստման ուղին,
վորի վրա կանգնել է Լուստովկոմատը || աստիճանի դպրոցի
8-րդ և 9-րդ խմբերի աշակերտների նկատմամբ, ճիշտ է և ան-
հրաժեշտ է շարունակել, սակայն առանց ցածրացնելու: 9-ամյա
պոլիտեխնիքական դպրոցի հանրակրթական մինուժ: 2-րդ կոն-
ցերտի պրոֆեսիոնալիզացիայի կիրառումն համարել հնարա-
վոր այն պայմանով, յեթե դպրոցները նորմալ չափով ապահով-
վեն նյութապես, սարքավորվեն ոժանդակ հիմնարկութիւններով
և համապատասխան ձևով նախապատրաստված դասատուական
կազմով: Աշխտովկոմատի հետ միասին մշակել || աստիճանի դպ-
րոցի սովորողներին ձրի պրակտիկա տալու հարցը:

10. Շարունակել դործարանային 7-ամյակների ցանցի ծա-
վալումը, լավացնելով նրանց աշխատանքի ղեկավարութիւնը և
նրանց ծրագրի բովանդակութիւնը սերտորեն կապելով տվյալ
արտադրութեան ելութեան հետ:

11. Գյուղական լեռնատնտեսութեան դպրոցը, վոր հիմնա-
կանում լիովին արդարացրեց իր նշանակութիւնը և ավելի ու
ավելի յե գրավում գյուղացիութեան ուշադրութիւնը, պետք է

հետապնդում բարեկամի, թե ուսումնական գործը լավ հիմքերի վրա դնելու և թե գյուղական ազգաբնակչության ամենաչքաւոր խավերի մուտքն ապահովելու իմաստով:

Պետք է ուժեղացնել ուշադրութիւնը գյուղյերի ազգայրոցի տնտեսական բաղադրի ամրացման վրա և աշխատել ավելացնելու մատնանշված դպրոցների աշակերտների համար թոշակը:

12. Յերկրի ժողովրդական տնտեսութեան և կուլտուրական մակարդակի աճման, արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան զանազան ճյուղերի համար վորակավոր բանվորական ուշժի կարիքը մեծանալու, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատութիւններ մտնող լավ պատրաստված կադրերի պահանջի մեծացման հետ միասին նրա վորակի լավացմանը և մասնաւորապէս պրոֆկրթութեան իր բոլոր ձևերով (Ու. Ս. Մ. Հ. Լուսավորութեան սիստեմի միջին ողակը) Լուսժողովմատը պետք է հատուկ ուշադրութիւն դարձնի, գլխավորապէս, բլուջնում մասնաւորապէս պրոֆկրթութեան անմիջական կարիքներն արտացոլելու դասավանդող կադրերով ապահովելու, օտրքավորելու միջոցով և այլն:

13. Ռ. Ս. Ֆ. Մ. Հ. միջնակարգ դպրոցների և Ուկրաինայի պրոֆտեխնիքական և գյուղատնտեսական դպրոցների դասատուների աշխատավարձը, վոր աշխատավարձի ամբողջ սխտեմում ամենաթուլ ողակներից մեկն է կազմում, առաջիկա ուսումնական տարում անհրաժեշտ է բարձրացնել:

14. Նախադպրոցական դաստիարակութեան ասպարիզում անհրաժեշտ է ընդարձակել նախադպրոցական հիմնարկութիւնների ցանցը, ինչպես ի հաշիվ հասարակական ձեռներիցութեան գրավման, այնպես ել՝ շնորհիվ տեղական և պետական բլուջների աճման և պետք է ձեռք առնել միջոցներ ավելացնելու այդ գծով բաց թողնվող գումարները:

15. Տալով առանձին նշանակութիւն մանկական անապատտանութեան դեմ պայքարելուն և մատնանշելով այդ տիպի հիմնարկների ծանր դրութիւնը, անհրաժեշտ է դնել հետևյալ և մոտակա խնդիրները՝ մանկական անապատտանութեան դեմ պայքարելու համար:

ա) Ուժեղացնել ձեռնարկումները փողոցի անապատտաններին ընդգրկելու նկատմամբ և հիմնված տնապատտանութեան դեմ պայքարելու Յ-ամյա պլանի վրա, այդ ասպարիզում անցնել պլանային աշխատանքի:

բ) Փողոցային անապատանության գոյութիւնն դեպքում դադարեցնել անապատան յերեխաների մանկատների և այլ հիմնարկների կրճատումը:

գ. Անապատան յերեխաների հիմնարկներում մանկավարժի աշխատանքի համար ստեղծել ավելի նպաստավոր նյութական և իրավական պայմաններ:

դ) Ուժեղացնել խորհրդային հասարակայնության մասնակցութիւնը անապատանության դեմ պայքարելու, մանկության պաշտպանութիւնն գործում, մասնավորապէս՝ յերեխաների կյանքը բարելավող մանկական հանձնաժողովի և «մանուկների բարեկամների» ընկերութեան գործունեւութիւնն ուժեղացնելու գործում:

ի. Ուժեղացնել անապատանութիւնը կանխող ձեռնարկումները, ժանապանդ գլուղական վայրերում:

զ. Դաստիարակել յերեխաների մեջ աշխատանքային ունակութիւններ և տեղավորել նրանց արտադրութեան մեջ՝ արդյունաբերութեան և գլուղատնտեսութեան գծով, ինչպէս նաև՝ գործարանային և գլուղիերիտ դպրոցներում:

Մատնանշելով այն, վոր մասսայական հիմնարկութիւններում բավականաչափ ուշադրութիւն չեն դարձնում յերեխաների գեղարվեստական և ֆիզիքական դաստիարակութեան գործը կանոնավոր հիմքերի վրա դնելուն, հանձնարարել Լուսժողկոմատին տալ տեղերին համապատասխան ցուցմունքներ մանկավարժական աշխատանքի մատնանշված կողմերին օվելի մեծ ուշադրութիւն դարձնելու և աճող սերնդի ֆիզիքական և գեղարվեստական դաստիարակութեան գործի զարգացման համար համապատասխան բարենպաստ պայմաններ ստեղծելու անհրաժեշտութեան մասին:

16 Կվալիֆիկացիայի բարձրացման ասպարիպում համազումարը հաստատում է Կ Կ. ՄԻ պլինուսի և Լ. Ժ. Կ. վերջին կոնֆերենցիայի վորոշումները կվալիֆիկացիայի բարձրացման հարցերի մասին:

Հատուկ ուշադրութիւն դարձնել Սոցդասվարի ընդհանուր բյուջեից 3% վորակավորման բարձրացման գործին հատկացնելու վորոշումն իրագործելու վրա: Ծուլց տալ ամեն տեսակի նյութական ոժանդակութիւն լուսաշխի տներին, վորպես մի կազմակերպութեան, վրը կատարում է վորակավորման բարձրացման աշխատանքի բավական մասը:

17. Մասնայական պրոֆտիտներ և արժույթի անհրաժեշտ և կիրառելի հետեւալը.

ա) Գործարանային գալորոցներ (փ 34) ցանցի ծավալումը պիտք է խստորեն համապատասխան լինի այս կամ այն ռալոնի արտադրութեան առանձին ճշուդերի բանվորական ուլթի նկատմամբ յեղած պահանջներին:

բ) Դպրոցի ծրագիրը պետք է հարմարեցվի այն արտադրութեան պրակտիկ խնդիրներին, վորի սխտեմի մեջ դրնվում է տվյալ գալորոցական հիմնարկութիւնը, ապահովելով հանրակրթական գիտելիքների անհրաժեշտ նվազագույնը:

գ) Պետք է ուժեղացնել ժողովրդական լուսավորութեան մարմինների ուղարկութիւնը գործարանային գալորոցների մեթոդական դեկավարութեան հարցերի վրա, ձգտելով միթողական դեկավարման կատարյալ միասնականութեան, ինչպիս նաև անհրաժեշտ է ավելի մեծ համաձայնեցում տնտեսավարական հիմնարկութիւններին ժողովրդական լուսավորութեան մարմինների միջև՝ վարչա-անխնիքական և մանկավարժական կազմի հրավիրման հարցերում:

դ) Գործարանային գալորոցների համար հարկավոր է մոտ ժամանակաշրջանում մշակել տիպական հաստիքներ, սարքավորման և դործիքի նորմաներ:

յե) Մատնանշելով գործարանային գալորոց մտնողների անբավարար հանրակրթական մակարդակը, անհրաժեշտ է անշեղորեն ձգտել ընդունելու, իբր նորմա, 7-ամյակներ ավարտածներին:

զ) Հանձնանարել Լ. Ժ. Կ. ձեռք առնելու մի շարք միջոցներ գործարանային գալորոցները բավականաչափ պատրաստված դասատուների կազմով ապահովելու համար:

ԲՈՒՀ-ԵՐ, ԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՏԵՃՆԻ-ԿՈՒՄՆԵՐ

1. Յեւրկի ինդուստրացումը բարձրացնում է բուհերի և գիտական հիմնարկների նշանակութիւնը և պահանջում է ուժեղացնել ուղարկութիւնը այդ հիմնարկութիւնների կազմակերպչական-տնտեսական և ուսումնական-միթողական կողմի վրա: Պետք է ամենայն համառ հետեւողականութեամբ աշխատել ավելացնել տալ բուհերի և գիտակ. հիմնարկների համար բաց թողնելով միջոցները:

2. Խնայողութեան ուժերն ու բուհերն և գիտակ հիմնարկներն աշխատանքը լավացնելու անհրաժեշտութիւնը հրամայարար թելադրում և կիրառել այդ հիմնարկութիւններում ռացիոնալիզացիայի սկզբունքը, ինչպես նրանց տնտեսական կյանքում, այնպես եւ՝ ուսումնական-մեթոդական աշխատանքում: Անհրաժեշտ և այդ հարցերի լուծմանն ու քննութեանը հրավիրել պրոֆմարմիններին, վորոնք ամեն կերպ պետք և նպաստեն րացիոնալիզացիայի սկզբունքը կիրառելուն:

3. Անհրաժեշտ և արագացնել բուհ-երի ուսումնական ծրագրերի մշակման աշխատանքի ավարտումը: Բուհ-երում դասավանդման նոր մեթոդներ մտցնելու աշխատանքը ընդարձակելով և խորացնելով՝ անհրաժեշտ և գործադրել դրանք միայն ըստ ֆինանսական հնարավորութիւնների և դասատուների կազմի պատրաստակա-նութեան:

4. Գիտական աշխատավորներ նախապատրաստելու ասպարիզում պետք և առանձնապես ուշադրութիւն դարձնել նոր հերթի (смена) պլանային և սխեմատիկ նախապատրաստութեանը, ավելացնելով ասպիրանտների թիվը, գրավելով աշակերտներ ընտրութեանը գիտական աշխատավորների սեկցիան, միաժամանակ բարելավելով նրանց կյանքի նյութական և իրավա-կան պայմանները և նրանց գիտական գործունեութեան վողջ շրջապատը:

5. Պետք և ուժեղացնել գիտական աշխատավորների վորա-կավորման բարձրացման և ասպիրանտների նախապատրաստման պլանային ղեկավարութիւնը, ձգտելով ավելացնելու Խորհրդ. Միութեան սահմաններում և արտասահման գործուղումների թիվը, լավացնելով ոտար լեզուների դասավանդութիւնը, կազմակերպելով հատուկ սեմինարներ մարքսիստական պատրաստականութեան համար և ասպիրանտների համար մտցնելով արտադրական պրակտիկա:

6. Բարձրագույն դպրոցի աշխատավորների աշխատավարձի անբավարար մակարդակը, վոր բոլորովին չի համապատասխանում նրանց վորակավորման և հետ և նմում ժողովրդական տնտեսավարական աշխատանքի մյուս ճյուղերի վորակյալ մասնագետների աշխատավարձից, սրանից բղխող պաշտոնների համակցութիւնը (совмести тельство) ամենայն վճռականութեամբ թելադրում են Բուհ-երի և գիտական հիմնարկների աշխատավորների նյութական դրութեան բարելավման անհրաժեշտութիւնը:

7. Հաշվի առնելով փորձված տեխնիքական և սպասարկող պլանառնալի կարևորութիւնը բարձրագույն դպրոցում և գիտական հիմնարկներում և մատնանշելով այդ կատեգորիայի աշխատավորների բացարձակ անբավարար աշխատավարձը, անհրաժեշտ հա-հարարել աշխատել բարձրացնել տեխնիքական և սպասարկող կազմի աշխատավարձը:

8. Հաստիքներ մտցնելը բուհերի և գիտական հիմնարկնե-րի աշխատանքների կազմակերպումը կարգավորելու և բարելա-վելու կարևոր խնդիրներից մեկն է: Հաստիքներն անցկացնելիս չպիտի թուլ տալ, վոր ցածրանա աշխատավարձի այն մակար-դակը, վորին հասել ենք դրուշքային սխտեմ մտցնելու մոմեն-տին, ինչպես նաև անհրաժեշտ է ընդարձակել Ուկրալինայի բուհ-երի և գիտական, հիմնարկների գիտական աշխատավորներին հաստիքային սխտեմով ընդգրկումը և ճշտել այն ըստ բուհ-երի և գիտակ. հիմնարկների ինդիվիդուալ առանձնահատկութիւննե-րին համեմատ:

9. Ուկրալինայի գիտական աշխատավորների համար ան-հրաժեշտ համարել առաջիկա քուշկետային տարում անցկացնել. ա) բանվորական ժամանակի համամիութենական նորմերը և բ) բարձրացնել բուհ-երի վոշ հաստիքային գտստուռների աշխա-տավարձը:

10. Միջոցներ ձեռք առնել իրացնելու 1924 թ. հունվար 1-ի դեկրետը Սիբիրի բուհ-երի գիտական աշխատավորների աշխա-տավարձը 100%-ով բարձրացնելու մասին:

11. Ուշադրութիւն դարձնել բուհ-երն ու գիտական հիմնարկ-ները գիտական-ուսումնական սարքավորմամբ ապահովելու վրա, աշխատելով թեթեացնել տալ արտասամանից, ի. Ս. Հ. Մ-ում չնդած, գիտական գրականութիւն և ապարատուրա բերել տալը:

12. Հարկավոր է վճռական որեն աշխատել, վորպեսզի բաց թողնվեն անհրաժեշտ գումարներ ինչպես բուհ-երի և գիտական հիմնարկների պլանով, այնպես ել այդ հիմնարկների գիտական աշխատավորների կոլլեկտիվի նախաձեռնութիւնմբ տարվող գիտա-կան հետազոտական աշխատանքի համար:

13. Անհրաժեշտ է ընդարձակել գիտական աշխատութիւն-ների հրատարակութիւնը, աշխատելով գիտական հիմնարկների և բուհ-երի հրատարակչական գործունեութիւն համար ձեռք բերել համապատասխան հատկացումներ ((асгнований), վորը գիտական հետազոտական հիմնարկութիւնների ընդհանու աշ-խատանքի կարևոր բաղադրիչ մասերից մեկն է կազմում:

14. Խարձրագույն դպրոցները մտնողների անբավարար պատ-
րաստականութիւնը պահանջում է, վոր յերկրորդ աստիճանի և
պրոֆտէինիքական դպրոցական հաստատութիւններում գործը
ավելի լավ հիմքերի վրա դրվի: Այս տիպի հիմնարկութիւննե-
րում պիտք է շարունակել գիտելիքների և ունակութիւնների
ամրացման և բարձրացման աշխատանքը, աշխատելով համաձայ-
նեցնել քուհի-երի պահանջները դեպի սոցիալական հիմնարկ-
ները:

15. Հանձնարարել Լուսժողովատեսներին ձեռք առնել միջոց-
ներ լավ հիմքերի վրա դնելու պրակտիկայի և ստաժավորման
գործը, գրավելով այդ աշխատանքին տնտեսավարական ժողովոճա-
տեսն ու հիմնարկութիւնները:

16. Տէխնիկումների աշխատանքի գծով անհրաժեշտ է ու-
ժեղացնել ղեկավարութիւնը, մշակել հաստիքներ և ձեռք բերել
կատարյալ համաձայնութիւն ժողովրդական լուսավորութեան
մարմինների և շահագրգռված տնտեսավարական հիմնարկութիւն-
ների միջև, ինչպես ծրագրալին մեթոդական աշխատանքի, այն-
պես եւ տէխնիկումները մանկավարժական և վարչա-տէխնիքա-
կան կազմով լրացնելու ասպարեզում:

ՔԱՂԼՈՒՍԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ

1. Անգրադիտութեան վերացումն համարելով մոտակա ժա-
մանակա շրջանի կարևորագույն խնդիրներից մեկը, անհրաժեշտ
է ամրացնել լիկկայանների գոյութիւն ունեցող ցանցը, ապա-
հովելով այն անհրաժեշտ ուսումնական ձեռնարկներով և համա-
պատասխան պատրաստութիւն ունեցող աշխատավորների կազ-
մով: Ցանցի հետագա զարգացումը պիտք է տարվի խիստ պլա-
նային կարգով:

2. Հատուկ ուշադրութիւն դարձնել խրճիթ-ընթերցարան-
ների ցանցի ամրացման և աշխատանքի բարելավման վրա, աշ-
խատելով ստեղծել մատնանշված հիմնարկութիւնների համար
մշտական աշխատավորների կադր և յերկար ժամանակով ամրաց-
նելով նրանց այդ հիմնարկութիւններին:

Իբրև հերթական խնդիր, դնել խրճիթվարների աշխատա-
վարձը | աստիճանի դպրոցական աշխատավորների դրույքի հետ
համասարեցնելու հարցը:

3. Հաշվի առնելով ազգաբնակչութեան ավելի ու ավելի ա-

ձող պահանջը իր կուլտուրական մակարդակը բարձրացնելու գործում և դրա շնորհիվ դրքի, իբրև մասսայական լուսավորութեան գործիքի, անչափ աճած նշանակությունը, անհրաժեշտ համարել գրադարանների ցանցի հետագա պլանաչափ զարգացումը, լրացնելով համապատասխան դրքերի լինվենտարով և ապահովել գրադարանային աշխատավորների բավականաչափ պատրաստված կադրով:

Մատնանշելով գրադարանապետների անբավարար աշխատավարձը, տմեն կերպ աշխատել ավելացնել գրադարանապետների դրույքը, ձգտելով հավասարեցնել այն Վաստիճանի դպրոցների ուսուցիչների դրույքին:

Հատուկ դասընթացներ և կոնֆերենցիաներ հրավիրելու միջոցով նպատակ դնել կազմակերպելու գրադարանային և քաղ-լուսաշխատավորների վորակավորման բարձրացման և պլանաչափ նախապատրաստման գործը:

4. Զգտել ընդարձակելու բանվորական համալսարանների, բանվորական և գյուղացիական մասսաների համար լեքեկոյան դպրոցների և դասընթացների ցանցը, ապահովելով նրանց անհրաժեշտ ուսուսմական սարքավորումով և դասատուներին կադրով:

5. Զարգացնել կինոյի գործունեությունը, հարմարեցնելով նրա աշխատանքը բանվորական և գյուղացիական մասսաների կուլտուրական պահանջներին, հաշվի առնելով գյուղում կինո ունենալու սուր անհրաժեշտությունը և պատշաճ ուշադրություն դարձնելով տարածվող կինո ֆիլմերի գաղափարախոսական հետևողականության վրա:

ԱՇԽԱՏԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՓՈԹՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

Իրենց գործունեության մեջ բացառիկ ուշադրություն դարձնելով ազգային փոքրամասնությունների մեջ ժողովրդական լուսավորության գործը դնելու վրա, լուսժողկոմատներն այդ ասպարեկում պետք և առաջ քաշեն հետևյալ հիմնական մոմենտները:

ա) ազգային փոքրամասնությունների միջից նախապատրաստել աշխատավորներին անհրաժեշտ կադրեր. բ) ստեղծել ուսուսմական մեթոդական գրականություն, վորի համար հենց իրենց ազգային փոքրամասնությունների միջից պատրաստել վորակյալ հեղինակների կորիզ:

Անհրաժեշտ և ամբացնել լիզած մանկավարժական տեխնի-

կումները ցանցը, ինչպես նաև հարկավոր ուշադրութիւն դարձնել յերկարատե դասընթացքներ կազմակերպելու միջոցով բարձրացնել մասսայական հիմնարկութիւններում յեղած աշխատավորների վորակավորումը գ) ուժեղացնել դպրոցական շինարարութեան զարգացումը: Խնկատի ունենալով դպրոցական հիմնարկների անբավարար քանակը հյուսիսի ազգութիւնների մեջ, հատուկ ուշադրութիւն դարձնել հյուսիսում դպրոցական ցանցի զարգացման վրա, և ի նկատի առնելով ընդհանուր ուսման խնդիրները, հաշվի առնել նրանց ստեղծման շտապողակոնութիւնը դ) ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ նրանց բուհ-երում տեղավորելու համար:

ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. ուսումնացման չենթարկւած շրջաններում ստեղծել և ամրացնել դպրոցներ, իսկ նահանգներում մոտակա ժամանակամիջոցում անցկացնել Հ. Կ. Գ. Կ-ի վորոշումը գաւլուբաժիններն ինքնուրույն բաժիններ դարձնելու մասին:

2. Հատուկ ուշադրութիւն դարձնել տեղական տեսչութեան վորակը բարձրացնելու վրա, կազմելով այն գլխավորապէս, ամենաընդունակ և հասարակայնորեն—ակտիւ մանկավարժներից, վորոնք արդեն աչքի յեն ընկել տեղական հիմնարկներում պրակտիկ աշխատանքով: Տեսչութեան աշխատանքում հիմնական խնդիրը պիտք է համարել մասսայական աշխատավորին ռգնութիւն՝ հրահանգչութիւն ցույց տալը: Բարելավել տեսուչների նյութական վիճակը և թեթեւացնել նրանց ավելորդ վորշակազմակերպչական և տեխնիքական աշխատանքներից՝ լուսբաժինների ապարատներում:

3. Սոցիալարի մասսայական հիմնարկների վարիչների նկատմամբ պիտք է պահանջել նրանցից ավելի բարձր մեթոդական վորակավորում (մասնավորապէս նախադպրոցական հիմնարկների վարիչներից) վորպեսզի վերջիններս կարողանան փաստորեն իրականացնել իրենց հիմնարկների մանկավարժական կոլլեկտիւներում մեթոդական աշխատանքի արժանի ղեկավարութիւնը:

4. Հիմնարկութեան տնտեսական կյանքը կազմակերպելու մեջ խիստ կարևոր խնդիր պիտի համարել անհատական նախահաշիվների կիրառումը և հիմնարկների վարիչներին վարկերի տնորեն լինելու փաստական իրավունք վերապահելը:

5. Նոր ուսումնական տարվա սկզբին որենսդրական կարգով պիտք ե լուծումն տալ մանկավարժական աշխատանքի նորմերի հարցին, վոր մշակել են լուսաշխի Կ. Կ. ու Լուսժողովմատը:

6. Բացառիկ ուշադրություն դարձնել լուսաշխատավորներին իրավական դրության հարցերին, տեղի սենեցող սխալ արձակումների և տեղափոխությունների դեմ վճռական պայքար մղելու ուղղությամբ:

7. Ուժեղացնել և կարգավորել տեղական Լուսարժիների աշխատանքի ղեկավարությունը, ինչպես և այն հիմնարկությունների, վորոնք գտնվում են լուսժողովմատի անմիջական տեսչության տակ:

8. Դնել աշխատանքի միասնական դպրոցի կանոնադրությունը վերացնելու հարցը, մանավանդ «վարիչների իրավունքներն ու կոլլեկտիվի հետ նրանց ունեցած փոխհարաբերությունները» գլխի:

9. Դնել խնդր՝ կայունացնել գոյություն ունեցող պետրյուշետային հիմնարկությունների ցանցը և մասսայական հիմնարկներին համար մշակել տիպական հաստիքներ:

10. Դարձնել անհրաժեշտ ուշադրություն Սոցդասվարի մասսայական հիմնարկությունների և հենց իրեն Լուսժողովմատի ապաքարատի՝ աշխատանքի և ռացիոնալիզացիայի անհրաժեշտության վրա, հրավիրելով ակտիվ մասնակցության միութենական կազմակերպություններին:

11. Ուսումնական պլաններ և ծրագրեր մշակելիս, գրավել ակտիվ մասնակցության միութենական մարմինների ներկայացուցիչներին և հաշվի առնել ծրագրային-մեթոդական և կազմակերպչական-մեթոդական ընդլի կրող հարցերի առթիվ մասսայական կոնֆերենցիաների և համագումարների հանած վորոշումները:

12. Մշակել դպրոցական պահեստի ուսուցիչների ինստիտուտ մտցնելու հարցը:

13. Ցույց տալ միությանը նյութական ոգնություն և ամեն տեսակի ոժանդակություն քաղաքներում ինտերնատներ կազմակերպելու համար՝ գլուղական լուսաշխատավորների վորդինների աշակերտներ ընդունելու համար:

ՄԻՈՒԹԵԱՆ V\ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ

2. Ա. Մ. Կ. Խ-Ի ՄՅՅԲԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ. Ա. Մ. Կ. Խ-ի նախագահութիւնը մեր համամիութենական V\ համագումարի վորոշումների մեջ, կազմակերպչական հարցերի նկատմամբ, մտքեւ ե հետեւալ փոփոխութիւնները.

1. Վերացվում ե ծանոթութիւնը, վոր համագումարը մտքեւ եր 5-րդ գումարման Կ. Կ. V\ պլենումի բանաձևի 6-րդ կետի մեջ Միութեան գյուղական մարմինների կառուցվածքի մասին և, իբրեւ կանոն, իր ուլթի մեջ ե մնում հին կանոնադրութիւնը, ըստ վորի 25 հոգուց վոչ պակաս աշխատավոր ունեցող խոշոր հիմնարկութիւններում ստեղծվում ե ինքնուրույն տեղկոմ:

Հ. Ա. Մ. Կ. Խ-ի կազմրածինը, իբր բացառութիւն ալ կանոնից, դեռևս համագումարից առաջ մեղ իրավունք եր տվել չկազմակերպել անկախ տեղկոմ 25 հոգուց վոչ պակաս աշխատավորներ ունեցող խոշոր հիմնարկութիւններում ալն գեպքերում, յիբր գավառակում (ռայոնում) կա միմիայն ալդպիսի մեկ հիմնարկութիւն:

Հ. Ա. Մ. Կ. Խ-ի կազմրածինը նույնպես թոյլ ե տալիս, վոր գավառակի (ռայոնի) խոշոր հիմնարկների ինքնուրույն տեղկոմներին միացվեն և գյուղի (գյուղխորհրդի) ալ հիմնարկութիւններ, այսինքն՝ նրանց վերածել խմբկոմիսի:

Ի լրումն սրա Կ. Կ. պարզաբանում ե, վոր գավառական (ռայոնական) կենտրոնի տերրիտորիայում խոշոր հիմնարկութիւն, վորն իրավունք ունի ինքնուրույն տեղկոմ կազմակերպելու, լինելու դեպքում ևս նպատակարար չե առանձնացնել ալն և դարձնել մի ինքնուրույն միութենական միավորը, ալ պետք ե գավառակային տեղկոմն ստեղծել տվյալ հիմնարկութեան կից:

2. Վերացվում ե նույնպես պլենումի և համագումարի վորոշումը՝ փորձի համար գլուղբլորոնք ստեղծելու մասին: Հ. Ա. Մ. Կ. Խ-ն գլուղական բլուրոն համարում ե մի ավելորդ վերնաշէնք և առաջարկում ե թողնել ուլթի մեջ պատգամավորական ինստիտուտը:

Ի լրումն սրան Կ. Կ. պարզաբանում ե, վոր լուսաշխատավորներին ըստ գլուղերի (գլուղխորհուրդների) համախմբելու և սպասարկելու հարմարութիւնն ու կարեւորութիւնը հաշվի առ-

նելով, — նպատակահարմար և պատգամավորներին ևս ընտրել հենց այս վարչական հասկացումով, ըստ սահմանված ժողովրդի (տես «պատգամավորական ինստիտուտի և պատգամավորական ժողովների մասին» կանոնադրութունը), ըստ վորում 2-3 գյուղի աշխատավորները կարող են միանալ պատգամավոր ընտրելու համար:

3. Ձի հաստատված նաև համագումարի վորոշումը, բոլոր ծայրամասային հանրապետութլուններում և մարզերում վոչ պակաս, քան 15 աշխատավոր լինելու դեպքում գավառակային տեղկոմ կազմակերպելու մասին: Հ. Ա. Մ. Կ. Խ-ի նախագահութլունն, իբրև փորձ, թույլ տվեց մեզ կիրառել այդ վորոշումը միայն Թուրքմենստանի, Ուզբեկստանի և Ղաղախստանի կազմակերպութլուններում:

4. Գյուղըյուրոններ կազմակերպելու մասին համագումարի հանած վորոշումը վոչնչացնելու հետևանքով ի չիք և դառնում նաև գավառակներում և ռայոններում, վորտեղ ռայվարչութլունների գոյութլունը թույլատրվում են, գյուղխմրկոմներ կազմակերպելու մասին հանված վորոշումը, չեթե գյուղի (գյուղխորհրդի) սահմաններում կա վոչ պակաս՝ քան 15 մարդ:

5. Այսպիսով, Հ. Ա. Մ. Կ. Խ-ի պարզաբանման հետևարքով, մեր միութլյան գյուղական մարմինները կառուցվելու լեն հետևյալ ձևով.

ա) Գավառական, շրջանային (ОКРУЖНЫЙ) վարչութլուններին լենթարկված 25-ից վոչ պակաս աշխատավորներ ունեցող հիմնարկութլուններում ինքնուրույն տեղկոմներ, չեթե այդպիսի հիմնարկներ թիվը 2-ից պակաս չե, ըստ վորում թույլատրվում և միացնել նրանց գյուղի (գյուղխորհրդի) այլ հիմնարկութլուններ:

բ) Պատգամավորներ, համաձայն պատգամավորների ինստիտուտի և պատգամավորական ժողովների կանոնադրութլան և

գ) Գավառակային (ռայոնական) տեղկոմ, վորը համախըմբում և գավառակի (ռայոնի) բոլոր հիմնարկութլունների աշխատավորներին, բացի խոշոր հիմնարկութլուններին կից ինքնուրույն տեղկոմների կազմի մեջ մտնողներից:

Այն գավառակներում և ռայոններում, վորտեղ թույլ և տրվում ստեղծել ռայոնական կոմիտեներ (ռայկոմներ), միութենական մարմինները կառուցվում են հետևյալ կերպ.

ա) Խմրկոմներ գավառակային կենտրոնի տերրիտորիայում

և գյուղերում (գյուղխորհուրդներում) 25 հոգուց վոչ պակաս աշխատավորներով, համաձայն խմբկոմների ընդհանուր կանոնադրութան:

բ) Ռայոնական կոմիտեներին չենթակա ինքնուրույն տեղկոմներ՝ խոշոր հիմնարկութուններում, գյուղի (գյուղխորհրդի) այլ հիմնարկութունները նրան միացնելու թույլտվությամբ:

գ) Պատգամավորներ՝ ինչպես խմբկոմների ներսում, այնպես ել անմիջականորեն ռայոնական կոմիտեների հետ կապված, համաձայն պատգամավորական ինստիտուտի և պատգամավորական ժողովների կանոնադրութան:

դ) Ռայոնական կոմիտե, իբրև ղեկավար մարմին, չենթարկված շրջանային (окружное) վարչութան:

Տեղկոմի և խմբկոմի կողմից չհամախմբված աշխատավորների նկատմամբ, գավառակային (ռայոնական) կոմիտեն կատարում է Տեղկոմական ֆունկցիաներ:

6, Զի հաստատված նաև համագումարի վորոշումը (§ 32 կետ «գ») 1928 թվից տեղկոմների միջոցներից կուտաշխատանքի համար կատարվող մասհանումները մինչև 25% հասցնելու մասին: Առաջարկված է ղեկավարվել Հ. Ա. Մ. Կ. Խ-ի նախագահությամբ 1927 թ. փետրվարի 24-ի վորոշումով, վորով մեր միութան համար սահմանվում է հետևյալը— 1927 թ. հոկտեմբերի 1-ից անցնել տեղկոմական միջոցներից կուտաշխատանքի համար 25% հատկացնելուն, իսկ 1928 թ. հունվարի 1-ից՝ 50%:

7, Վերանում է համագումարի վորոշումն այն մասին, թե՛ ցանկալի լի գրական աշխատավորներին թողնել Լուսաշխմիութան մեջ: Համաձայն Հ. Ա. Մ. Կ. Խ-ի նախագահության 1927 թվի մայիսի 6-ի վորոշման (գրական աշխատավորների անդամութան մասին), վերջիններս մանում են այն միութան մեջ, վորի մեջ են մտնում այն հրատարակչութան աշխատավորները, վորի հետ կապված է տվյալ գրական աշխատավորը:

8. Վերանում է համագումարի վորոշումը տարեկան ընագրային հաշվետվության անցնելու մասին (§ 29): Հ. Ա. Մ. Կ. Խ-ի նախագահության վորոշմամբ ընագրային հաշվետվությունը մնում է միայն համագումարներից առաջ:

Կ. Կ առաջարկում է միութենական բոլոր կազմակերպութուններին վերահիշյալ փոփոխութունները, վոր մացրված են մեր միութան՝ համամիութենական V) համագումարի վորոշումների մեջ կազմակերպչական հարցերի վերաբերմամբ և նրանց

առթիվ չեղած պարզարանութիւններն ընդունել ի դեկավարութիւն:


Այն կազմակերպութիւններում, վորտեղ միութեան գլուղական մարմինների կազմութիւնը հակասում և հասկացված կառուցվածքին, անհրաժեշտ և համապատասխան ձևով վերակազմել այնպիսի հաշվով, վոր վերակազմութիւնը 1927 թ. հոկտեմբերի 1-ից ուշ չտևի:

Ռայոնական վարչութեան, խմբկոմների կանոնադրութիւնները և տեղկոմի ու պատգամավորական ժողովների փոփոխված կանոնադրութիւնները կուղարկվեն ձեզ մոտ ժամանակներս լրացուցիչ ձևով:

(Շրջաբ. Կ. Կ. №000(020)148. 23/V—1927 թ.)



1844



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038437

(354)

A ¹¹
38437

ԳԻՆՆ Ե 35 ԿՈՊ.